

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ
ՊԱՏԵՐԱԶՄ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎ. ԿԵՆՏՐՈՆԱԿ.
ՀՐԱՏԱՐԱԿՅ., ՄՈՍԿՎԱ, 1928

1 MAR 2010

355
Թ-28

Ա. Վ.

ՊԱՏԵՐԱԶՄԻ

ԴԵՄ

ՊԱՏԵՐԱԶՄ

888



18 JUL 2013

40485

ԱՌԱՋԱԲԱՆ

«Հիշիր իմպերիալիստական պատերազմը։ Ահա այն կարևոր դիմումը, վոր անում եւ կոմունիստական ինտերնացիոնալը յուրաքանչյուր աշխատավորին անխափիր, անկախ այն հանգամանքից թե նա վորտեղ եւ ապրում կամ ինչ լեզվով եւ խոսում։ Հիշիր, վոր շնորհիլ կապիտալիստական իրավակարգի գոյության, կապիտալիստաների մի փոքր խմբակ հնարավորություն ունեցավ չորս յերկար տարիների ընթացքում հարկադրել զանազան յերկրների բանվորներին իրար կոտորել։

Հիշիր, վոր բուրժուազիան ամենասոսկալի սովի և աղքատության մատնեց Յեվրոպան և ամբողջ աշխարհը։ Հիշիր, վոր յեթե կապիտալիզմը չտապալվի, այդ տեսակ ավազակային պատերազմների կրկնությունը վոչ միայն հնարավոր եւ, այլև անխուսափելի։

Լենինի պահանջով եր, վոր ժողովուրդների այդ չորսամյա կոտորածի և նոր իմպերիալիստական պատերազմների սպառնալիքի այս հիշեցումը մտցված եւ կոմունիստական ինտերնացիոնալի ծրագրի մեջ։

Ոգոստոսի 4-ին լրանում եւ 15 տարի այն որից, յերբ համաշխարհային պատերազմը բռնկվեց։ Դեռ այսօր եւ ամբողջ աշխարհի քաղաքների և զյուղերի փողոցներով շրջում են անդամալույծներ՝ անվտաք,

անձեռք, կույրեր, հաշմանդամ մարդիկ — այդ հրեշտավոր և ավերիչ սպանդանոցի զոհերը:

Նրա մասնակիցների հիշողություններում գեղ մինչև այժմ չեն ջնջվել ֆրոնտներում, գերության մեջ և թիկունքում կրած տանջանքները: Նրանց աչքի առաջ դեռ ևս պարզ կանգնած են ցավահար կորստի պատկերները իրենց դժբախտակից յեղայրների, վորոնք ծածկել են իրենց վոսկորներով Յեվրոպայի դաշտերը՝ Բալտիկ ծովից մինչև Սև ծովը, Բելգիայի ծովեղբից մինչև Շվեցարիայի սահմանը: Իսկ նոր, անհամեմատ ավելի սոսկալի պատերազմի սպառնալիքն արդեն կախված ե մարդկության գլխին:

Նույն հակասությունները, նույն թշնամանքը, ինչպես և 1914 թ., բաժանում են կապիտալիստական աշխարհը և նրան մղում են դեպի պատերազմ: — պայքար գաղութների համար, նումքի շուկաների համար, արդյունաբերության ապրանքներ ծախելու և ֆինանսական կապիտալի գործադրության համար: Բուրժուազիան պատրաստվում է նոր պատերազմի համար ճիշտ այնպես, ինչպես 1914 թ., միայն շատ ավելի լայն չափերով: Զինվելու համար ծախսվում են միլիարդներ: Արդյունաբերությունը, գիտությունը, տեխնիկան, գրւալոր շատրները — այդ ամենը զբաղված են մոտակա պատերազմի պատրաստությամբ, վորը կարող է բռնկվել նույնպես «հանկարծակի», ինչպես և 1914 թվին:

Հակասություններով պառակտված, պատրաստվելով իրենց վեճը դեպի ուժով վճռելու, ամբողջ

աշխարհի իմաստերիալիստները սերտ միավորված են միասնական գգացմունքով և միասնական շահերով — Խորհրդային Միության գեմ մահացու ատելությամբ, մեր բանվորական պետությունը վոչնչացնելու ձըգտումով: Յարական Խուսաստանի բանվորների և գյուղացիների որինակը, վորոնք իրենց ստրկային յերկիրը դարձրել են ազատ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, վոգեորում ե կապիտալիստական յերկրների և գաղութների լկվածներին և ճնշվածներին կապիտալիզմը տապալելու պայքարի համար: Քանի ավելի յէ զորեղանում և բարգավաճում մեր սոցիալիստական շինարարության յերկիրը, այնքան ավելի և խոր են թափանցում սոցիալական հեղափոխության գաղափարները արտասահմանյան պետությունների բանվորացյուղացիական մասսաներում: Մահամերձ կապիտալիստական իրավակարգին հաջորդ ե գալիս սոցիալիզմը, վորի իրազործումը սկսվել է Հոկտեմբերյան հեղափոխությունից: Բուրժուազիայի վերջին հույսն ե՝ խորտակել Խորհրդային իշխանությունը, նրա ավերակների վրա վերականգնել կապիտալիզմը և ապա, յերբ ձեռքերն ազատ կլինեն, զրո՞ն տալ իրենց յերկրների բանվոր դասակարգի վրա:

Բայց համաշխարհային սպանդանոցի և հետագա տասնամյա արյունալի «խաղաղության» դասերը զուր չեն անցել աշխատավոր մարդկության համար: Անցած պատերազմը մասսաներին անպատրաստ գտավ հեղափոխական դիմադրում ցույց տալու: Ամենա-

դժվար բոպեյին, պատերազմը հայտարարելիս, ղեկավարները, սոցիալ-դեմոկրատիայի լիգերները, Ա ինտերնացիոնալը, դավաճաննեցին բանվոր դասակարգին: Նրանք մատնեցին բանվոր դասակարգը բուրժուազիային և վոյենշչինային:

Այժմ հեղափոխական բանվորական շարժման գլուխ ե անցել Կոմունիստական Ինտերնացիոնալը՝ վոր հիմնել ե Լենինը տասը տարի առաջ: Բուրժուակարգերը համաշխարհային պատերազմի եյին պատվայի դեմ մղած կոփիզերում կոփված, Կոմինտերնը ասսավորմ տասնյակ տարիների ընթացքում: Իրար սրատես կերպով հետեւում ե թե ինչպես բուրժուաշխեմ եյին կանգնած պետությունների յերկու զորավոր զիան պատրաստվում ե ԽՍՀՄ դեմ նոր պատերազմ, Ամբավորումներ: Մի կողմ կանգնած եյին Անտանտի նոր արշավանք մղելու: Այն որը, յերբ բուրժուազիան պետությունները — Անդիան, Ֆրանսիան, Ռուսաստանի կանի կրկնելու 1914 թ. ոգոստով 4-ը, նատանը: Նրանց հարում եյին մի շարք յերկրորդական կհանդիպի կոմկուսակցության կողմից ղեկավարվող պետություններ: Մյուս կողմը կանգնած եյին կենտրոնական պետություններ: Լենինյան ավանդաբարդի կոչին արձագանք վենգրիան, Վլատրովեցին միլիոնավոր աշխատավորներ՝ վորոնք միաւ վորված են հեղափոխական պլրումիլիություններում, պահում եր Գերմանիայի տնտեսական և ռազմական պություններ, անցած պատերազմի հեղափոխական մասնակիցները, բանվորա-դյուլազիական յերիտայական արդության մասսաները: Զեռքներում հրացանները ամուր սեղմած նրանք ավինները կդարձնեն բուրժուազիայի դեմ մղած պատերազմում ժուազիայի դեմ և այդպիսով կիրագործեն Լենինի թր կրած պարտության հետ: Նա ցանկանում եր վոչ ռազմական պատղամը — իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի:

I. ՀԱՄԱՇԽԱՐՉԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վ. Ա. Ռ. Դ. Ռ. Շ. Շ. Վ. Վ. Վ.

Յեվրոպայի կառավարություններն ու իշխող դաշտայի դեմ մղած կոփիզերում կոփված, Կոմինտերնը ասսավորմ տասնյակ տարիների ընթացքում: Իրար զիան պատրաստվում ե ԽՍՀՄ դեմ նոր պատերազմ, Ամբավորումներ: Մի կողմ կանգնած եյին Անտանտի վորդ կանի կրկնելու 1914 թ. ոգոստով 4-ը, նատանը: Նրանց հարում եյին մի շարք յերկրորդական կհանդիպի կոմկուսակցության կողմից ղեկավարվող պետություններ: Մյուս կողմը կանգնած եյին կենտրոնական պետություններ: Լենինյան ավանդաբարդի կոչին արձագանք վենգրիան, Վլատրովեցին միլիոնավոր աշխատավորներ՝ վորոնք միաւ վորված են հեղափոխական պետությունները — Անդիան, Ֆրանսիան, Ռուսաստանի անդիպի կոմկուսակցության կողմից ղեկավարվող պետությունները — Մյուս կողմը կանգնած եյին կենտրոնական պետությունները — Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Բոլղարիան և Տաճկաստանը:

Անդիան յերկյուղով զիանում եր թե ինչպես զարդուեալարական ինքնապաշտպանության կազմակերութը, թե ինչպես ընդարձակում եր նա իր զարդություններ, անցած պատերազմի հեղափոխական թային տիրապետությունները և կառուցում իր հսկամասնակիցները, բանվորա-դյուլազիական յական ռազմական և առեսրական նավատորմիղը: Ամուր սեղմած նրանք ավինները կդարձնեն բարանական բուրժուազիան վոչ մի որ չհաշտվեց ժուազիայի դեմ և այդպիսով կիրագործեն Լենինի թր կրած պարտության հետ: Նա ցանկանում եր վոչ այնքան վրեժ լուծել «ազգային խայտառակության» համար, վորքան յետ ստանալ այդ պատերազմում կորցրած յերկաթի հանգերով հարուստ Ելլպաս և

Ա. Բ.

համար, վորքան յետ ստանալ այդ պատերազմում կորցրած յերկաթի հանգերով հարուստ Ելլպաս և

Նոտարինգիա նահանգները։ Բացի դբանից նա ձգտուեր ձեռք զցել գերմանական ածխային շրջանները լայնացնել իր սահմանները մինչև Հռենոս։ Ռուսական կառավարությունը վաղուց ի վեր մտադրված եր գրավելու Դարդանելն ու Կոստանդնոպոլիսը, ցանկանում եր ոգուա քաղել Տաճկաստան հաշվին Հարավում և Արևելքում։ Գերմանական իմպերիական ընդարձակ ծրագրներ եր փայփայում ի արքապետություններն Աֆրիկայում լայնացնելու համար, աշխարհի մյուս մասերում նոր գաղութներ ձեռք բերելու համար, և, բացի այդ, ծովերի վրա Անգլիայի տիրապետությանը վերջ դնելու։ Մնացյալ պետությունները կապված եյին մեծ պետությունների հետ դաշնքների և պայմանագրերի ցանցով վորոնք ապահովում եյին նրանց տերիտորիայի ավելացումն և ուրիշ շահույթներ՝ պատերազմին մասնակցելու համար։

Համաշխարհային պատերազմն անխափանելի յեր Դա հաստատվում ե այն ժամանակվա ամենահայտն պետական գործիչների հրատարակած մի շարք գրքերով և հիշողություններով։ Համաշխարհային սպառանոցի այդ դրդիչները — մինիստրներ, դիպլոմատներ և գեներալներ — (նրանցից շատերն այժմս ե վողջ առողջ կանգնած են կառավարության ղեկանալով պատերազմի պատասխանատվություններար վրա զցել, հենց իրենք ամենամանրամաս կերպով մերկացրին այդ ղիպական դափագրությունը

Սակայն ամենաազդու մերկացումներ պատերազմի պատրաստության վերաբերմամբ կատարել ե Խորհրդային իշխանությունը։ Նա լույս աշխարհ հանեց ցարական արտաքին գործերի գաղտնի արխիվներից կառավարությունների միջև տեղի ունեցած ամբողջ գրագրությունը և այդպիսով՝ բացեց նրանց արյունաբերու և զազելի քաղաքականության ամբողջ տականը։

Բալկաններում, ուր յերբեք չեյին դադարում աղքամիջյան պատերազմները, իմանվում եյին ցարական Ռուսաստանի, սուլթանական Տաճկաստանի և կայզերական Գերմանիայի և Ավստրո-Վենգրիայի շահերը։ Այդ պետություններից յուրաքանչյուրը ձգտում եր ամուր հաստատվել Բալկանյան թերակղութա, տիրանալ Յեվրոպայից դեպի Ասիա և Աֆրիկա տանող այդ դարպասին։ Զուր չե, վոր այդ թերակղին այն ժամանակ Յեվրոպայի «վառողի շտեմարան» ածականը ստացավ։ Նա պատրաստ եր պայմանությունը և ամբողջ աշխարհը ցնցելու ամենափոքր ընդհարման դեպում, ամենաչնչին կայծից։

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐՑԵՎՈՅՈՒՄ

Այդ կայծը, վոր համաշխարհային պատերազմի հրդեհը վառեց, Ավստրիայի թագաժառանդ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունն եր։ Դա պատահեց 1914 թ. հունիսի 28-ին, Սարակո քաղաքում, Բունիա և Հերցոգովինա պրովինցիայում։

Ֆրանց Ֆերդինանդը ավստրիական արքունիքը զինվորական կլիկայի պարագլուխներից մեկն եր նա հոգին եր այն անմիտ կեղեքման, վորին յեն թարկված եյին «լասկուտային կայսրության» (այդ պես եյին կոչում Ավստրո-Վենգրիան) հպատակագմամիլիոն ազգային փոքրամասնությունները — ռումիններ, հունգարացիններ, սերբեր, լեհեր, ուկրայինցիններ, չեխեր, սլովակներ, կրոատներ, խրվատներ, սլովեններ, խոալացիններ և այլն:

Հուլիսի սկիզբները Բունիայում, Սերբիայի սահմանի մոտ, պետք ե կայանային ավստրիական բանակի մեծ մանյովըներ՝ Ֆրանց Ֆերդինանդի ղեկավարությամբ։ Այդ մանյովըները նշանակված եյին քիչ առաջ նվաճած այդ նահանգի ազգաբնակչության վրա սարսափ ազդելու համար։ Միաժամանակ հուլիսյան մանյովըները սերբիական ֆրոնտում ապագա ռազմական գործողությունների փորձ եյին։

Ֆրանց Ֆերդինանդը իր շքախմբի ուղեկցությամբ Սարաևո ժամանեց 1914 թվի հունիսի 28-ին, վիզովդանի — սերբերի ազգային սպի որը։ Այդ որը 1989 թ. Սերբիան կորցրեց իր անկախությունը և Տաճկաստանի իշխանության տակ ընկալ։

Սարաևոյի փողոցներում ավստրիական թագաժառանգի գալուն սպասում եյին սերբիական նացիոնալիստների տեսորիստական խմբերը։ Նրանցից մեկի — 19 տարեկան գիմնազիստ Գավրիլա Պրինցիսի գնդակը մահացրեց Ֆրանց Ֆերդինանդին։

Այդ պայմանունը հանդեսացավ վորպես պատերազմի վաղուց սպասված առիթ։ Հետագա դեպքերը հաջորդեցին իրար կայծակի արագությամբ։

«ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԴԻ ՄԵԶ Ե»

Հուլիսի 27-ին Ավստրո-Վենգրիան պատերազմ հայտարարեց Սերբիային, մեղադրելով նրան Սարայի սպանությունը կազմակերպելու մեջ։ Չորս որից հետո ընդհանուր զինակոչ սկսվեց Ռուսաստանում, վորը հանդես յեկավ սերբիական ժողովրդին «պաշտպանելու»։ Ոգոսառափ 1-ին կայզեր Վիլհելմը պատերազմ հայտարարեց Ռուսաստանին և միաժամանակ գերմանական զորքերը շարժվեցին դեպի արևմուտք, Ֆրանսիայի և Բելգիայի սահմանները։ Ոգոսառափ 4-ին սկսվեցին ռազմական գործողություններ Ֆրանսիայի և Գերմանիայի միջև, իսկ հետեւյալ որը սկսեց մասնակցել և Անգլիան։

«Ընդդեմ ցարիզմի! — գոչում եր Գերմանիայի բուրժուազիան և զինվորականությունը։

«Հանուն քաղաքակրթության պաշտպանման! «Ընդդեմ գերմանական բարբարոսների! — կատարար գոչում եյին Ֆրանսիայի փողոցային թերթերն ու նացիոնալիստական շրջանները։

«Յերկրորդ հայրենական պատերազմ! — ավետում եր ցարական կառավարությունը ազնվական-կալվածատերերի կլիկայի և ուղղափառ վաճառականության հետ միաբերան։

«Հանուն Գերմանիայի վուրսատակ տված միջազգային իրավունքի! Հանուն փոքրիկ բելգիական ժողովի պաշտպանման»! — գուժում եյին անգլիական իմպերիալիստները, Հնդկաստանի, Յեղիպտոսի ու ուրիշ գաղութների ժողովուրդների դարավոր կեղեքիչները:

Քաղաքների փողոցներով, աղդային դրոշակները ծածանելով և կայսրների պատկերները ցուցադրելով, անցնում եյին պոլիցիայի ձեռքով կազմակերպված հայրենասիրական մանիֆեստացիաները, Դրանց առաջից գնում եյին նվազախմբեր, վորոնք նվազում եյին «բոժե ցարյա խրանի», «Մարսելյեզ» և կամ «Գերմանիան ամենից բարձր»։ Իսկ բանվորական թաղերում և գյուղերում մարդիկ շտապ մնաս բարեյին ասում իրենց ընտանիքներին։ Զինվորական եշելոնները մեկը մյուսի յետեից սլանում եյին դեպի Փրոնտները տանջանքների և կորստի հանդեպ։

ՍՈՅԻԱԼ-ԴԵԼՐՈԿՐԱՏՆԵՐԻ ԴԱՎԱԾԱՌԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այդ որերում կատարվեց սոցիալիստական առաջնորդների ամենամեծ դավաճանությունը։ Փոխանակմասաները պատերազմի և տիրող դասակարգերի դեմ հեղափոխական կռվի կոչելու, այդ դավաճան հուղաները ժողովրդի թշնամիների կողմն անցան։

Դեռ պատերազմից յերկու տարի առաջ Բազելում (Եվրոպիայում) գումարված Ա Խնտերնացիոնալի Միջազգային Կոնգրեսը վրա հասնող իմպերիալիս-

տական պատերազմի դեմ մանիֆեստ ընդունեց, ուր ասված եր։ —

«Կոնգրեսը ուղղակի և պարզ ցույց ե տալիս այն ուղին, վորով պետք ե առաջ գնան բոլոր բանվորները՝ յեթե վոճիրն իրազործվի և պատերազմը սկսվի. այդ ուղին — քաղաքացիական պատերազմի ուղին ե»։

Մազմական գործողությունները սկսվելուց դեռ յերկու որ առաջ Բելգիա (Բելգիա) կայացավ Ա Խնտերնացիոնալի բյուրոյի արտակարգ նիստը, վորը հայտարարեց թե ամբողջ «համաշխարհային պրոլետարիատը անպայման ցանկանում ե խաղաղություն պահպանել»։

Բայց արդեն ոգոստոսի Յ-ին սոցիալիստ Վանդերվելեն բելգիական կառավարության կազմի մեջ մտավ։ Հետեւյալ որը գերմանական սոցիալ-դեմոկրատները ուայիստագում հայտարարեցին քաղաքացիական խաղաղություն և ձայն տվին՝ վորպեսզի կառավարությանը փող բաց թողնվի պատերազմի ծախքերի համար։ Ոգոստոսի Յ-ին ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը «սրբազն միության» դաշն կապեց բուրժուազիայի հետ։ Սոցիալիստ Սամբա և Գեղ մինհստրի պաշտոններ ստանձնեցին, սոցիալիստական ֆրակցիան պատգամավորների պալատում քվեարկեց հոգուտ ուազմական վարկերի։

«Մենք համոզված ենք — հայտարարեց ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը իր մանիֆեստում — վոր կռվում ենք վոչ միայն Ֆրանսիայի

մեծության համար, այլև ազատության, հանրապետության, քաղաքակրթության համար։ Մենք կռվում ենք նրա համար, վորպեսզի աշխարհը ազատվելով իմպերիալիզմի խեղդիչ կեղեքումից և պատերազմի սարսափներից վերջապես կարողանա խաղաղություն վայելել՝ հարգելով բոլորի իրավունքները»։

Անգլիական սոցիալիստները աջակցեցին կառավարության հայտարարած՝ ուեկուտային զինվորագրության* կամպանիային։ «Մեծ պատերազմը—զրում եյն նրանք— հանկարծ բոնվեց։ Ավտորիայի հարձակումը Մերժիայի վրա մյուս պետություններին հարկադրեց պատերազմին մասնակցել, իսկ մեր հայրենիքը սովորած եր մասնակցել պատերազմին շնորհիվ այն հանգամանքի, վոր Գերմանիան պատերազմ հայտարարեց Բելգիային այն պատճառով, վոր այդ փոքրիկ պետությունը հրաժարվեց խախտել իր չեզոքությունը»։ Անգլիական, իսկ հետագայում նաև իտալական սոցիալիստները նույնպես մտան իրենց կառավարությունների կազմերի մեջ,

Ուուս մենշևիկներն ու եսերները արտասահմանյան իրենց յեղայրակիցներից յետ չմնացին, նրանք ամենանպատակորեն աջակցեցին Նիկոլայ Ա կառավարության «յերկրորդ հայրենական պատերազմի» լոգունգին։ Ա ինտերնացիոնալը այդ խայտառակ որերին իրեն դասակարգային կազմակերպություն դադարեց գոյություն ունենալուց։

* Արտպարի զինվորագրություն մտցված եր 1699 թվին և տարած-1874 թիվը, յերբ դրան փոխարինեց ընդհանուր զինվորագրությունը.

ՅՈՅԼՇԵՎԻԿ-ԼԵՆԻՆՑԱՆՆԵՐԻ ԶԱՅՆԸ

Յեվ միմիայն բոյլշևիկների մի փոքրիկ խմբակ, կենինի ղեկավարությամբ հենց առաջին բոպեյից համաշխարհային սպանդանոցի վերաբերմամբ անհաշտ դիրք բռնեց։ Նա մերկացրեց սոցիալ-դեմոկրատների դավաճանությունը և հայտարարեց սոցիալիստական հեղափոխության և զենքը բուրժուական կառավարության դեմ դարձնելու անհրաժեշտության լոգունգը։

1914 թ. ոգոստոսին լույս տեսան բոյլշևիկների թեզիսները պատերազմի մասին վոր գրել եր կենինը։ Այդ թեզիսների առաջին կետում ասված եր. —

«Յեվրոպական և համաշխարհային պատերազմը բացելքաց բուրժուական, իմպերիալիստական պատերազմի կնիք ե կրում։ Պայքար՝ շուկաների և յերկրներ թալանելու համար, բոլոր յերկրների պրոլետարիատը հիմարացնելու, բաժան-բաժան անելու և կոսորել տալու ձգտում, մի ազգի վարձկան ստրուկներին մյուս յերկրի վարձկան ստրուկների դեմ սրելու հոգուտ բուրժուազիայի—այդ ե պատերազմի միակ իսկական բովանդակությունն ու նշանակությունը»։

Գերմանական ռայխատագում միմիայն կարլ Լիբենիստը, ընդդեմ բոլորի, միահամուռ. «Դավաճան» աղաղակների տակ, 1914 թ. դեկտեմբերի 2-ին դեմ քվեարկեց կառավարությանը պատերազմի համար փող տալու։ Ռայխստագի նախագահին իր տված հայտարարության մեջ նա գրում եր. —

«Ներկա պատերազմը, վորը մասնակցող ժողովուրդներից և վոչ մեկը չեր ցանկանում, մղվում է վոչ հոգուտ գերմանական կամ մի այլ ժողովրդի բարեկեցության համար... Բողոքելով պատերազմի դեմ, նրա դրդիչների և դեկապլարների դեմ, կապիտալիստական քաղաքականության դեմ՝ վոր առաջ է բերել նրան, կապիտալիստական նպատակների դեմ՝ վորոնց համար մղվում ե նա, աննեքսիայի և թալանի պլանների դեմ, Բելգիայի չեղոքությունը խափտելու դեմ, ուազմական դիկտուրայի դեմ, քաղաքական և սոցիալական ուխտադրժույն դեմ՝ վորի մեջ մեղավոր են թե կառավարությունը և թե իշխող դաստիարակերը, յես մերժում եմ պահանջած ուազմական վարկերը»:

Սակայն բուրժուազիան միջոցներ ձեռք առավ, վորպեսզի խլացնի հեղափոխականների բողոքը և նրանց միջադաշտին պըրղետարական համերաշխության կոչերը: 1914 թ. նոյեմբերի սկիզբները ցարական կառավարությունը բանտարկեց Պետական Դումայի բոյլուկի պատգամագորներին — Պետրովսկուն, Մուրանովին, Բադակին, Սամոյլովին, Շագովին: Նրանց գատապարտեցին ցմահ աքսորի Միքելում: Լենինին, վոր այդ ժամանակ ապրում եր Գալիցիայում, ավստրիական ժանդարմները ձերբակալեցին վորպես «ռուս լրտեսի» և նա ստիպված եր մյուս հեղափոխական եմիգրանտների հետ անցնել չեղոք Շվեցարիա: 1915 թ. փետրվարին ձերբակալ-

վեց Ռոպա Լուքսեմբուրգը, վորը համարյա ամբողջ պատերազմի ընթացքում գերմանական բանտերումն եր նստած։ Իսկ 1916 թ. գերմանական դատարանը կարև Լիբբենեխտի հաշվվը տեսավ, դատապարտելով նրան 6 տարի տաժանակիր աշխատանքի՝ «ապստամբության և պետական դավաճանության կոչի» համար։

Զնայած պատերազմի հակառակորդների գեմ գործ
դրած դաժան տեսողին, չնայած այն տաժանակիր
ուազմա-դաշտային դիացիալինեին, վոր տիրում եր զո-
րանոցներում, դիմադրությունն ընդդեմ պատերազմի
որ-ավուր աճում եր բանվորական շրջաններում,
բանակում և նախատորմիդում։ Ակավելով ջոկ-ջոկ
ցույցերով և խոռվություններով, քանի գեռ պա-
տերազմը ձգձգվում եր, այդ դիմադրությունը սկսեց
ընդունել մասսայական չափեր և ավարտվեց մի շաբք
հեղափոխություններով և քաղաքացիական պատե-
րազմներով։

ՅԵՂ ԲԱՑՐԱՅՈՒՄ — ԲՈՒՆՏԵՐ — ՀԵՂ Ա.ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1914 թ. դեկտեմբերին արևմտյան ֆրոնտի առանձին մասերում արգեն տեղի ելին ունենում յեղբայրացման դեպքեր գերմանական և ֆրանսիական զինվորների միջև։ Դրա հետևանքով գերմանական բանակին դեկտեմբերի 24-ին տրվեց հրաման, վորովնախագույնացնելով։ Երկու թե թշնամու հետ յեղբայրացողը կդատապարտվի գնդակահարման։ 1915 թ. հուն-

վարի 7-ին անգլիական լրազիր «Լեյբոր Լիդեր»-ը հաղորդում ե անգլիական և գերմանական զինվոր-ների՝ բելգիական ֆրոնտում յեղբայրացման մասին:

Սյունունեաւ սկսվեցին հեղափոխական ցույցերը դրամասերում, ուղղմանավերում և ձեռնարկություն-ներում: 1915 թ. փետրվարի 23-ին տեղի ունեցալ հնդկական զինվորների ապաստմբությունը Սինգա-փուրում, ողոստոսի 15-ին Մարսելում բունտեր սար-քեցին ուղարկան զինվորները, վորոնք սպանել ելին իրենց գնդապետին: Սեպտեմբերի 18-ին բունտ սար-քեց 78-րդ հետևակ վաշար՝ ուղարկան հարավարե-մայան ֆրոնտում՝ Ողերյան ստանիցիայի մոտ: Ռազ-մա-դաշտային դատարանի վճռով գնդականարվեցին զինվորներ ժուրավլյովը և Նովիկովը: Հոկտեմբերի 24—25-ին հուզումներ տեղի ունեցան ուղարկան «Գանգուտ» և «Պավել Լ» ուղարկան նավերի վրա:

1916 թ. մայիսի 1-ին Բերլինում տեղի ունեցան բողոքի դեմոնստրիացիաներ ընդդեմ պատերազմի, նրանց կազմակերպման գործում մասնակցություն ունեցավ Կարլ Լիբքնեխտը: Մայիսի 27—30-ին ամ-բողջ Գերմանիայում տեղի ունեցան մասսայական քաղաքական գործադրուներ այն պատճառով, վոր Լիբքնեխտին ձերբակալել և դատի ելին տվել: Շարժ-ման մեջ մասնակցում ելին Կիլի պետական գործա-րանների բանվորները, Բերլինի՝ ուղարկան գործին սպասավորող գործարանները (55.000 մարդ), նույն-պես և Բրաունշվայզի գործարանները, և այլն: Հու-

լիսի 7-ին ֆրանսիական նավահանգիստ Տուլոնում ապստամբվեցին ուռասական «Սակոյլդ» զրահանավի մատրոսները, փորձ արին նավը պայթեցնել: Հոկ-տեմբերի 17-ին Գոմելում տեղի ունեցավ ֆրոնտ ուղարկված հինգ եշելոնների բունտը: Դեկտեմբերի 10-ին Պետրոգրադում սկսվեցին գործադրուներ և դե-մոնստրացիաներ: 179-րդ պահեստի գնդի զինվորները, վորոնց ուղարկել ելին Պետրոգրադի պրոլետարիատին զսպելու համար, հրաժարվեցին կրակել և սպանեցին իրենց կոմանդիրին:

Փետրվարյան հեղափոխությունը նույսաստանում նոր խթան տվեց միջազգային շարժմանը ընդդեմ պատերազմի: 1917 թ. ապրիլի 18-ին Գերմանիայում սկսվեց մետալիստների գործադրությունը, մյուս որը գոր-ծակուլ արին 300.000 բանվորները: Հուլիսի 22-ին խոշոր հուզումներ տեղի ունեցան գերմանական եսկադ-րայում, վոր կանգնած եր վկինելմսհաֆենում: Ռազ-մածովային դատարանը Ռայխսպիտչ և կերես մատ-րուներին, վորոնք զեկավարել ելին յելույթները, դատապարտեց մահվան պատժի: Նրանք գնդականար-վեցին սեպտեմբերի 3-ին՝ Քյոլնի մոտ: 19 մատրոս-ներ դատապարտվեցին ընդհանուր առմամբ 400 տարիա տաժանակիր աշխատանքի (կատրգա): Յե-լույթին մասնակցող 56 այլ մատրոսներ դատապարտ-վեցին բանտարկության՝ զանազան ժամկետներով:

1917 թ. սեպտ. 3-ին ֆրանսիական Լա-Կուրտին լագերում արյունալի ջարդի յենթարկեցին ուղարկան

12,000 զինվորների: Սրանք հրաժարվում ենին կռվել և պահանջում ենին իրենց անմիջապես ուղարկել Ռուսաստան: Լագերը շրջապատվեց արտիլերիայի 4 գնդերով և հետևակ դիվիզիայով: Յեվ յերբ ֆրանսիական զինվորները հրաժարվեցին կրակել ոռւս ընկերների վրա, — նրանց (ֆրանս. հետևակներին) յետ կանչեցին և փոխարինեցին ուրիշ զորամասերով: Լակուրախնի պաշարումը և ոմքակոծումը շարունակվեց յերեք որ: Հարյուրավոր զինվորներ սպանվեցին, հաղարավորներ — վիրավորվեցին: Ազատվածներին ուղարկեցին Ֆրանսիայի և Աֆրիկայի հանքերի ու շախտաների վրա տաժանակիր աշխատանքի:

Յերբ Հոկտեմբերյան հեղափոխության լուրն հասավ Սալոնիկի ֆրոնտում գտնված ուղարկան զորամասերին, նրանք բոլորը վորպես մեկ մարդ պահանջեցին վոր իրենց ուղարկեն հայրենիք: Նրանց զինաթափ արին, կոսորեցին բոլոր հեղափոխական ելեմենտներին, զինվորներին բաժանեցին տուգունքային կոմանդաների վրի վրա և գաղութային զորքերի խիստ պահպանության տակ՝ նրանց ուղարկեցին զանազան աշխատանքների Բալկանյան թերակղզում:

Հոկտեմբերյան հեղափոխությունը ազգանշան տվեց հեղափոխական շարժման բուռն վերելքին կապիտալիստական յերկրների ֆրոնտներում և թիկունքում: 1918 թ. հունվարի վերջին Գերմանիան բռնկվեց քաղաքական համատարած հսկայական զործադուլով, վոր ընթացավ հրապարակական հազարավոր դեմոնստրա-

ցիաներով: Ամենուրեք աեղի եյին ունենում արյունալի ընդհարություններ պոլիցիայի և բանվորական հեղափոխությունը ճնշելու համար հատկապես ստեղծված՝ ունտերո-փիցերական զորամասերի հետ: Միաժամանակ բռնկեց ընդհանուր գործադուլը Ավստրո-Վենգրիայում, այդ գործադուլն ևս վառ-հեղափոխական բնույթ երկրում: Բանվորներին պաշտպանում եյին չեխական, վենգրիական և լուսկենական ապստամբած զորամասերը: Փետրվարի 1-ին շարժվեց ավստրո-վենգրիական նավատորմիովը, վոր գտնվում եր Կատարը նավահանգստում և բաղկացած եր 40 նավերից: Ապուտամբությանը մասնակցում եյին ավելի քան 6,000 մատրոսներ: Այդ յելույթները Գերմանիայում և Ավստրիայում անկասկած կհասցնեյին հեղափոխության հաղթանակին և պատերազմին մի տարի առաջ վերջիտային, յեթե այդ գործին չխանգարեր սոցիալ-դեմոկրատիայի դավաճանությունը, Գերմանիայում սցիալ-դեմոկրատիայի լիդերներ Երերազ, Շայդեմանը և Բրաունը, վորոնք մտնում եյին գործադուլային շարժման շտաբի կազմի մեջ, բանվորներից զաղունի բանակցություններ եյին վարում կայդերի և Հինդենբանական «ձախ» սոցիալ-դեմոկրատիայի լիդեր Ռատոն Բառերը ինքն ե խոստովանում իր՝ «Ավստրիական հեղափոխության պատմությունը» գրքում, թե ինչ ամոթափ դավաճանություն ե թույլ տվել սոցիալ-դեմոկրատիան. — «Մենք համոզված եյինք, — զրում ե նա, — վոր հեղափոխության մոմենտը դեռևս

Հի հասել: Ուստի և մենք կողմանից եյինք զործադուլը դադարեցնելուն»:

Այդ դավաճանության հետևանքով՝ կառավարություններն ու զինվորական հրամանատարությունը հաջողեցին իրենց հաշիվը տեսնել շարժման հետ — այդ շարժումը ջախջախել: Հազարավոր բանվորներ բանտարկվեցին և ուղարկվեցին ֆրոնտ և բանտ, ավստրիական 800 մատրոսներին փակեցին բերդում, 40 մատրոսների յել հանձնեցին ռազմածովային դադարանի, 4 մատրոսի սպանեցին առանց դատարանի:

Ֆրանսիայում պատերազմի ժամանակ զորքերի մեջ տեղի յեն ունեցել 17 խոշոր հեղափոխական բոնկումներ: 1918 թ. հուլիսի 4-ին Պարիզի շատ զործարաններում և Փարիզներում պահանջ դրվեց՝ անմիջապես հաշտություն կնքել, իսկ ոգոստոսի 19-ին ամբողջ Ֆրանսիայում տեղի ունեցան բանվորների յելույթներ, վոր պահանջում եյին դադարեցնել իմպերիալիստների արշավը ընդդեմ ուստական հեղափոխության:

Ոգոստոսի 26-ին գերմանական բանակի շատ զորամասերում տեղի ունեցան խառնակություններ, բունտեր: Հոկտեմբերի 16-ին կիլում ապստամբեցին գերմանական նավատորմի 80,000 մատրոսներ: Հոկտեմբերի 28—31 տեղի ունեցավ Ավստրո-Վենցղիայի միապետության կործանումը և, վերջապես, վրա հասվ 1918 թվի նոյեմբերի 9-ը — հեղափոխությունը Գերմանիայում:

Նոյեմբ. 11-ին, յերբ ֆրանսիական կոմպիենե քաղաքում զինադադարը կնքվեց Անտանտի և Գերմանիայի միջև — համաշխարհային պատերազմը դադարեց:

ԱՐՅԱՆ ՅԵՎ. Ա.ՎԵՐՈՒԻՐՆԵՐԻ ՀԱՇԵՎԸ

Պատերազմին մասնակից յեղան, շատ քիչ բացառությամբ, աշխարհի բոլոր պետությունները և նրանց գաղութային յերկրները: Պատերազմը վերջանալուց հետո թափված արյան և կատարված ավերումների արած հաշիվը շատ ու շատ անգամ գերազանցեց այն բոլոր պատերազմների հետևանքները, վոր մարդկությունը մղել եր նախընթաց 125 տարիների ընթացքում, սկսած ֆրանսիական Մեծ Հեղափոխությունից:

Համաշխարհային պատերազմում զործող բանակների ունեցած մարդկային զոհերի չափի մասին գանձերի ու առաջարկելու պահանջական պահանջական պահանջական: — (տես եջ 24)

Այդպիսով պատերազմող զորքերի կորուստը համար ե 10.106.781 սպանվածների, 19.435.325 վասար և 3.500.000 ինվավիրավորվածների (այդ թվում 7.519.640 գերիների (վորոնց մեծ մասը լիներ) և 7.519.640 գերիների (վորոնց մեծ մասը լինել են կոնցենտրացիոն լագերներում): 40 %-ից մեռել են կոնցենտրացիոն լագերներում են, ամենաշահել հասակում, ավելին յերիտասարդներ են, ամենաշահել հասակում, 19-ից մինչև 24 տարեկան:

Մահը հնձում եր նաև թիկունքում: Բազմաթիվ ծերունիներ, կանայք և յերեխաներ սպանվել են գնդակներից և ուրմերից, սովոր և համաձարակներից: Զափազանց ավելացավ նաև ինքնասպանություններ:

ՀՈՐԾՈՂ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ
ՀԱՄԱՇԽԱՌՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Պետություններ	Սպան- վածներ	Վիրավոր- վածներ	Գերիներ	Ընդամենը
1. ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բուսաբանական	— 3,000,000	5,600,000	2,550,000	11,150,000
Ֆլորանիա	— 1,368,535	2,800,000	504,000	4,672,535
Մեծ Բրիտանիա	689,246	2,019,965	—	2,709,211
Բելգիա	— 100,000	150,000	70,000	320,000
Մ. Նահանգներ	75,000	70,000	—	145,000
Իտալիա	— 500,000	800,000	500,000	1,800,000
Բուլղարիա	— 260,000	246,000	240,000	746,000
Սերբիա և Չեռնոգորիա	40,000	152,000	200,000	392,000
Հունաստան	— 4,000	10,000	16,000	30,000
Փորթուգալիա	— 3,000	7,000	10,000	20,000
Թաղումանիա	— 1,000	1,000	—	2,000
Ընդամենը	6,040,781	11,855,965	4,090,000	

2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերմանիա	— 1,980,000	4,510,000	1,000,000	7,490,000
Ավստրո-Վենգրիա	1,440,000	1,980,000	1,800,000	5,220,000
Բուլղարիա	— 98,000	198,000	150,000	440,000
Տաճկաստան	— 550,000	891,360	479,640	1,921,000
Ընդամենը	4,066,000	7,579,360	3,429,640	

Ների և հոգեկան հիվանդների թիվը՝ Բացի դրանից հազարավոր զինվորներ և մատրոսներ հրացանազարկ յեն յեղել կամ աքսորվել են տաժանակիր աշխատանքերի ռազմա-դաշտային դատարանների վճռով՝ պատերազմելուց հրաժարվելու, դասավիճության կամ Փրոնտի դիսցիլինան խախտելու պատճառով։

Կուլող պետությունների պատերազմական ծախ-քերը հետեւյալ կերպ են բաժանվում (գոլարներով՝ մեկ դոլարը 1 ռ. 94 կ. վուկով)։—

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՔԵՐԸ
(Դոլարներով)

1. ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միացյալ Նահանգներ	32,080,266,968
Անգլիա	44,029,011,868
Անգլիական գաղութներ	3,433,813,072
Ֆրանսիա	25,821,782,800
Բուսաբանական	22,593,950,000
Իտալիա	12,313,998,000
Բելգիա	1,154,467,914
Սերբիա	399,500,000
Սերբիա	1,600,000,000
Բուլղարիա	270,900,000
Հունաստան	40,000,000
Յապոնիա	500,000,000
Այլ յերկրներ	144,257,690,622
Ընդամենը	

2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերմանիա	40,150,000,000
Ավստրո-Վենգրիա	20,622,960,000
Տաճկաստան	1,430,000,000
Բուլղարիա	815,000,000
Ընդամենը	63,017,960,000

Այդպիսով՝ պատերազմական ծախքերի ընդհանուր գումարը հավասար է 207 միլիարդ դոլարի։ Դրան պետք է ավելացնել ֆրանսիայում, Բելգիայում, արևելյան Պրուսիայում, Հյուսիսային Իտալիայում, Սերբիայում, Բուլղարիայում և Բուսաբանականում։

Պատերազմական ծալսքեր

Անտանտի պետություններ					Կենտրոնական պետություններ			
Հ. Ամերիկ. Մ.-Հայ.	Ֆաղութ. Անգլիա	Ֆրանսիա	Բրուսաստան	Մյուս յերկները	Գեղմանիա	Ակատրո-հենդովիա	Թյուրքիա	Բուռջարիա

կատարված ավերումների ֆասները, Միմիայն ֆրանսիայում ավերվեցին 10 դեպարտամենտ, քանդվեցին 20,000 դորժարաններ և փարբիկներ, 594,000 աներ և

5000 կիլոմետր յերկաթուղու գծեր։ Այդ ավերումների և խորտակած ուղղմական, մարդատար և առեսրական նավատորմիղի գինը հասնում է 50 միլիարդ դոլարի։

Բացի այս անմիջական նյութական կորսակից պատերազմը անհամար վնասներ հասցը մարդկությանը նրանով, վոր արտադրական աշխատանքից զրկեց ազգաբնակչության աշխատանքի ընդունակ մեծ մասը և բոլոր յերկրներում խորագույն տնտեսական քայլայտն առաջ բերեց։

«ԴԵՄՈԿՐԱՏԻԱԹԻ» ՀԱՂԹԱՆԱԿԸ

1919 թ. հունիսի 28-ին Վերսալում ստորագրեցին հաշտության պայմանագիրը Անտանտի 25 պետությունները և հաղթված Գերմանիան։ Գերմանիայից խլեցին բոլոր գաղութները, տերիտորիայի 13 %, ածուխի հանքերի 30 %, յերկաթահանքերի 75 %, ցինկի հանքերի 68 %, ցորենի և հաճարի 15,7 %, գետնախնձորի 18 %։ Բացի զրանից — առետրական նավատորմիղի 90 %, նաև 800 պարավոզներ և 230,000 մարդատար և ապրանքատար վագոններ։ Գերմանիային ամբողջովին զինաթափ արին — վոչընչացը ին ուղղմական գործարանները, արգելեցին ուղղմական ավիացիան, նավատորմիղը կրծատեցին՝ թողնելով միմիայն 21 նավ՝ ծովեզրի անհրաժեշտ պաշտպանության համար։ Զորքի թիվը կրծատեցին մինչև 100,000 զինվորի։

Գերմանիայի ռազմամթերանոցներից դաշնակիցները վերցրին 6.000.000 հրացան, 105.000 պուլեմյոտ, 28.500 մինամյոտ, 55.000 թնդանոթ, 39 միլիոն ռումբ. 16.600.000 ձեռքի գրանատ, 472 միլիոն փամփուշտ, 37.000 տոնն վառող, 14 հազար աչերոպլան, 27.740 այերոպլանի մուսոր և 37.700 դաշտային տելեֆոնի ապարատ:

Գերմանիային պարտավորեցրին հասցրած վնասները վճարել, ի հաշիվ այդ գումարի, վոր մի քանի տասնյակ միլիարդ և կազում վոսկով, Գերմանիայից դուրս տարան 100.000 ձի, 175.000 յեղջուրավոր անասուն, 221.000 վոչխար, 25.000 այծ, 245.000 ընտանի թռչուն, 55.000.000 տոնն ածուխ, 731 լոկոմոբիլ, 34.000 գյուղատնտեսական սեքենաներ, 116.000 հեռագրական սյուներ, 1.100.000 ելեքտրական լամպ, բազմաթիվ ազնվացեղ շներ և այլն։ Կոդոպտեցին ամեն բան՝ ինչ վոր կարելի յեր կողովատել։

Գերմանիայի հատուցած վճարների ընդհանուր գումարը 1923 թ. հունվարի 1-ին, թե վոսկով և թե իրերով, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է 57 միլիարդ մարկ վոսկով (մեկ մարկը — 47 կոպ.), Բացի դրանից Բելգիայի և Ֆրանսիայի ավերված շըրշաններում ձրի աշխատում եյին 475.000 գերմանացի ռազմագիրներ։

Գերմանիան այժմ ել շարունակում է վճարել ռեպարացիաները՝ միլիարդների հասնող գումարներ։ Այդ գործում շատ են շահագրգուված չյուս. Ամերի-

կայի Միացյալ Նահանգները, վորովհետև հաղթող պետությունները պատերազմի ժամանակ նրանից պարագելին վերցրել մոտ 25 միլիարդ (25.000.000.000) ռուբլի (վոսկով)։ 1914 թվին Լոնդոնում տեղի ունեցած խորհրդակցությունը ընդունեց այսպես կոչված Դառւեսի պլանը (սրա հեղինակի՝ ամերիկացի ֆինանսիստ Դառւեսի անունով), ըստ վորի՝ Գերմանիան պարտավորվել ե վճարել մինչև 1929 թիվը $8 \frac{1}{2}$ միլիարդ մարկ, իսկ դրանից հետո ամեն տարի (անորոշ ժամանակով) — $2 \frac{1}{2}$ միլիարդ։ Այս տարվա սկզբում Պարիզում հավաքված հաղթական պետությունների ներկայացուցիչները Գերմանիայից պատերազմի ծախսերը և տուգանքները առնելու մի նոր պլան մշակեցին։ Այդ պլանը իր հեղինակի անունով կոչվում է Յունգի պլան։ Ի՞նչումն ե կայանում նոր պլանի դիմավոր Եյությունը։

Գերմանիան պետք է 59 տարվա ընթացքում վճարի տարեկան 2 միլիարդ մարկ (մարկը արժե մոտ 47 կոպ.)։ Այդպիսով վճարումները պետք ե շարունակվեն մինչև 1988 թվականը։

Այսպիսով Յունգի պլանը վորոշեց, թե վճարումների ընդհանուր գումարը և թե նրանց տևողությունը։ Մինչև հիմա Գերմանիան վճարում եր, սակայն գեռ անորոշ եր, թե ի՞նչքան ե լինելու այդ վճարումների ընդհանուր գումարը և քանի՞ տարի յե շարունակվելու։ Այժմ Ամերիկան, Ֆրանսիան և Անգլիան Գերմանիային առան վորոշ շրջանակների մեջ,

Վորը ինչպես կթան կով 59 տարվա ընթացքում դաշնակիցներին վճարելու յե տասնյակ միլիարդներ:

Ճիշտ ասած, վոչ Գերմանիայում և վոչ ել իրենք հաղթող պետությունները լրջորեն չեն հավատում այդ բանին: Ամբողջ 59 տարի! մինչև 1988 թվականը! իսկ ով կարող ե ասել, թե աշխարհը ինչ կերպարանք կընդունի այդ ժամանակվա մեջ: Ռուսական պրոլետարիատի որինակը միթե կենդանի չե, վոր մի որվա մեջ, 1917 թ., Հոկտեմբերը վոչնչացրեց ցարական Ռուսաստանի հարյուրավոր միլիոնի հասնող պարտքերը:

Նման մի կանխազգուշացում ե գերմանական կոմկուսի վերջերս տեղի ունեցած համագումարը, վորտեղ գերմանական հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը վճարումների խնդրի վերաբերմամբ ընդունած իր վորոշման մեջ ռեպարտիայի (վճարումների) խնդրի վերջնական և արմատական լուծումը կապեց պրոլետարական հեղափոխության հետ:

Վերսալի պայմանագրի տակ մյուս դիլլումանների ստորագրությունների շարքում կա նաև Ա Ինտերնացիոնալի առաջնորդ և Բելգիայի գելեզատ Վանդերվելեյի ստորագրությունը: Այդպիսով սոցիալ-դեմոկրատիան պատասխանատու յե վոչ միայն համաշխարհին սպանդանոցի, այլև Վերսալի թալանի համար:

Մյուս կենտրոնական պետությունների հետ ստորագրվեցին առանձին պայմանագրեր: Նրանցից խլեցին հողերի մի մասը հոգուտ հաղթող հարեանների

և նույնպես պարտավորեցրին ուազմական հատուցումներ վճարել:

Ահա թե ինչպիսի «արդարացի» հաշտությամբ պսակվեց պատերազմը, վոր մղված եր հանուն դեմոկրատիայի և քաղաքակրթության վսեմ սկզբունքների:

ՍԱԿԱՅՆ ԱՅՍ ԴԵՌ ԲՈԼՈՐԸ ԶԵ

Յետպատերազմյան քայլայումն իր ամբողջ ծանրությամբ հարվածեց վոչ միայն հաղթված, այլ և հաղթող պետությունների բանվոր դասակարգին: Պատերազմի անմիջական հետևանքներն եյն աշխատավարձի պակասեցումն, աշխատանքային որվա յերկարացումն, աշխատանքի պայմանների ընդհանուր վատթարացումն, անտանելի հարկեր և միենալուն ժամանակ աճող թանգություն: Տիրապետող դասակարգերը պատերազմի բոլոր ծախքերն բարգեցին աշխատավորների մեջ Փին: Արտադրության կամփիտալիստական ուցիոնալիցիան, վոր միմիայն մի նպատակ ունի — շատացնել ձեռնարկատերերի յեկամուտները, առաջ ե բերում անընդհատ լայնացող գործազրկություն: Կապիտալիստական յերեք ամենազարգացած յերկրներում — Ամերիկայում, Անգլիայում և Գերմանիայում 9 միլիոնից ավելի գործազրկներ են հաշվում: Այսպիսով, աղքատների թվին ավելացան միլիոնավոր այրիներ և վրբեր, հաշմանդամներ, կույրեր, խուլեր, խելազարածներ: Միայն փոքրիկ Սերբիայում 1918 թվին

հաշվում եյին 500,000 վորբեր, վորոնց մի յերբորդը
կտղմում եյին անխնամ թափառաշրջիկ յերեխաներ:

Դրա հետ միասին պատերազմը ստեղծեց «Նոր հարուստների», սպեկուլյանտների բազմաթիվ շերտեր, վորոնք վիթխարի հարստություններ դիզեցին ուղամական մատակարարումների շնորհիվ: Յերկը պաշտպանության համար գործ անող ձեռնարկությունները առասպելական յեկամուտներ տվին իրենց տերերին: Ամ. Մ. Նահանգներում, վոր յեկոպական պետություններին մատակարարում եր թնդանոթներ, տանկեր և ավերումի ուրիշ զենքեր, միլիարդատերերի և միլիոնատերերի նախապատերազմյան թիվը մի քանի անգամ ավելացավ:

Ցանկանալով ժողովուրդների աչքում պատերազմը արդարացնել և դա շարունակել մինչև «հաղթական վերջը», իմալերիալիստները հաճախ հայտարարում եյին, վոր հաղթությունը ազատագրություն կբերի փոքր ժողովուրդներին:

Սակայն, ինչպես և իմալերիալիստների բոլոր խոստումները, այդ խոստումն ել ամենազարելի կեղծիք դուրս յեկավ: Սշմարհի այն վերաբաժանումը, վոր կատարեցին վերսալում, վոչ թե լավացրեց, այլ շատ ավելի վատթարացրեց իրավազուրկ ժողովուրդների դրությունը: Յետպատերազմյան տասը տարիների պատմությունը անվերջ գաղութային հալածանքների և ազգային փոքրամասնությունների անդութ կեղծքման շրջան ե:

Ֆրանսիական գրող Հանրի Բարբյուսը, Բալկան-ներում սպիտակ տեսորի դեմ պայքարող՝ Պարիզի կոմիտեյի նախագահը, 1925 թ. հետախուզեց ազգային փոքրամասնությունների դրությունը Բալկանյան պետություններում: Նա յեկավ այն յեղակացության, վոր Բալկանները — «Յեկոպական դժողովներ»: Մակեդոնիան կտրված եր յերեք մասի, նրանք աժանեցին իրար մեջ չունաստանը, Բոլղարիան և Հարավ-սլավիան: Մակեդոնիայի հունական մասից և Թրակիայից, հալածանքներից և սովից ազատվելու համար փախուստ են տվել 400,000-ից ավելի մարդ: 1922 թ. հույները Թրակիայից արտաքսեցին դեպի կղզիները 3000 ընտանիք, վորոնցից 3000 մարդ փչացան: Բուրգասի շրջանում զրկանքներից 21,000 մարդ մեռան: Զերնոգորիան բռնի կերպով միացրին Հարավ-սլավիայի հետ: Սերբիական զորքերը զյուղացիական ազստամբությունները ճնշելիս զյուղացիական տնտեսությունների 95 %-ից ավելին ավերեցին և կրակի մատնեցին 5000 տներ՝ բնակիչների հետ միասին:

Դոբրուջայի, Բուլղարիայի, Տրանսիլվանիայի և Բանատի ժողովուրդները հանձնվեցին Ռումինիայի կայսրին: Ռումինիան Անտանափ որհնությամբ գրավեց Բեսարաբիան: Այդ բոլոր յերկրներում ազգային լեզվի և կուլտուրայի դեմ մղած հալածանքները վերջ չունեն, պետական լեզուն բռնի յեն մտցնում աշակերտների գլուխը: Ռումինիայի զորքերը Բեսարաբիայում 1918 թ. մինչև 1925 թ. 18,000 մարդ կոտորեցին (վորոնց

թվում 11.000 — Խոտինի ապստամբության ժամանակ՝ 1918 թ., և 2000 — Թաթարբունարի գյուղացիներին՝ 1924 թվին): Բեսարաբիան յերկու տարի (1927 և 1928 թ. թ.) հաջորդաբար անբերք ե մնում: Ազգաբնակչությունը սովոր յե մատնվում, բայց կառավարությունից վոչ մի ոգնություն չի ստանում:

Լեհաստանի ֆաշիստ. կառավարությունը վերին-Սիլեզիայում, Արևմտ. Բելոռուսիայում և Ար. Ուկրայինայում ազգային կեղեքման դաժան քաղաքականություն ե անցկացնում: Տեղական դպրոցներն ու կուլտուրական-լուսավորական կազմակերպությունները փակված են: Ազգային շարժման գործիչները ձերբակալվում են, մի դատական պրոցես հաջորդում ե մյուսին: 1927 թ. հունվարին Ուկրայինայի ազգային-հեղափոխական շարժման գործիչների պրոցեսում Վլադիմիր-Վալինսկում 9 մարդ դատապարտվեցին ցման տաժանակիր աշխատանքի, 100 մարդ 762 տարվա բանտարկության: Անցյալ տարվա վերջը լեհական ֆաշիստները կոռվում ուկրայինցիների դեմ մասսայական պագրում սարքեցին: 1927 թ. քարքանդեցին բելոռուսական բանվորա-զյուղացիական Գրոմադանուն Նրա ղեկավարներին, վորոնց թվում 5 մարդ Սեյմի պատգամավորներ, դատապարտվեցին 214 տարվա տաժանակիր աշխատանքի:

Այդ բոլոր հալածանքների նպատակն ե հնագանդության մեջ պահել ծայրագավառների ազգաբնակչությունը՝ լեհաստանում և Ուկրայիայում խաղաղ

թիկունք ստեղծելու համար — ԽՍՀՄ դեմ պատերազմի դեպքում:

Սակայն կեղեքված ազգությունների վրա կատարված դաժանությունները գունատվում են գաղութներում իմպերիալիստների գործադրած արյունուշտ և գիշատիչ քաղաքականության հանդեպ:

1920 թվից սկսած Ֆրանսիան պատերազմ ե մղում Սիրիայում, 1923 թվից — Մարոկկոյում: 1928 թ. վերջերը արյան նոր հեղեղներ թափվեցին Ֆրանսիայի տիրապետության տակ գտնվող Կոնգոյում՝ նեղերի պատամբությունը ճնշելիս:

1927 թ. Հոլլանդիայի պատժիչ ջոկատները ինդոնեզիայում արյան մեջ խեղդեցին տեղական ապստամբ բնակիչներին: Հրով ու սրով են իրենց տիրապետությունը հաստատում կորեայում յապոնական իմպերիալիստները: Անգլիան կոտորածի յե յենթարկում հնդկաստանում բանվորա-գյուղացիական մասսաները: 1919 թ. Ամրիտսարա քաղաքում ապստամբությունը ճնշելիս հնդկական գեներալ Դայերը պուլեմյուններով զնդակահար արեց 1.500 մարդ: Անգլիացիք նմանապես կրօնական յերկապահականություններ են առաջբերում ինդուսների և մահմեդականների միջև, վորպեզսի նաև այդ միջոցով աշխատեն նրանց ուշադրությունը ընդհանուր թշնամուց — իմպերիալիստներից հեռացնելու: Այդ վեճերը սոսկալի արյունահեղություն են պատճառում: Որինակ, 1929 թ. մայիսի 1-ին, Բոմբեյում, ուր տեքստիլ բանվորների ընդհանուր

գործադուլ տեղի ուներ, անգլիական ազենտները մահմեղականներին սրեցին ինդուսների դեմ, վորպեսզի գործադուլը խափանեն և հնարավորություն չտան Բոմբեյի պրոլետարիատին աշխատանքի միջազգային տոնը տոնելու։ Յերեք որվա ընթացքում այստեղ սպանվեցին 21 և վիրավորվեցին 200-ից ավելի մարդ։

Սակայն Վերսալի հաղթողների արյունարբեության իրեկ ամենաշոշափելի որինակ կարող ե ծառայել Զինաստանը։ Առաջ Զան-Զո-Լինի հետ, հետո գոմինդանական բուրժուազիյի և նրա գեներալների հետ միասին ֆրանսիացիք, անգլիացիք, յապոնացիք և ամերիկացիք բազմաթիվ բանվորներ և գյուղացիներ վոչնչացրին։ 1927 թ. մարտի 25-ին անգլիացիք ծովից ումբակոծեցին Նանկին քաղաքն և կոտորեցին 2,000 մարդ։ 1927 թ. դեկտեմբերին Կանտոնի կոմունան քարքանդելիս, չինական սպիտակ-գվարդեյականներն իմպերիալիստների ոգնությամբ 5,000-ից ավելի մարդ սպանեցին։

II. ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԱՆԴԵԹ

ԻՐՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՆԵՐՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կապիտալիստական յերկրների տիրող դասակարգերի միջև հարատև բարեկամական հարաբերություններ չեն կարող տեղի ունենալ. Պատմության մեջ շատ որինակներ կան յերբ երեկվա բարեկամերն ու դաշնակիցները մահացու թշնամիններ եյին դառնում և իրար դեմ պատերազմ սկսում։ 1815 թ. Անգլիան միացավ Գերմանիայի և Ռուսաստանի հետ ընդդեմ Ֆրանսիայի։ 1855 թ. Անգլիան և Ֆրանսիան պատերազմում եյին Ռուսաստանի դեմ։ Շատերը հիշում են դեռ 1904—05 թ. ռուս-յապոնական պատերազմը։

Կապիտալիստական պետությունների փոխադարձ հարաբերությունների այդ անկայունության պատճառները կայանում են նրանում, վոր կապիտալիստական իրավակարգը շարունակ ծնեցնում ե առանձին պետությունների՝ արդյունաբերական, առևտրական և ֆինանսական բուրժուազիայի կամ այդ պետությունների խմբավորումների միջև մրցակցություն և շահերի ներհակություն։ Յերբ մի քանի պետությունների կապիտալիստների շահերը միառժամանակ համապատասխանում են, նրանք միասին պատերազմ են սկսում ընդհանուր թշնամու դեմ։ Պատերազմը վեր-

ջանալուց հետո նախկին դաշնակիցների միջև ներհակություններ, հակասություններ են ծագում և ահա նոր պատերազմ ե պատրաստվում նրանց մեջ, վորոնք քիչ առաջ կապված ելին դաշինքով և պայմանագրերով:

Նույնը պատահեց և Անտանտի պետություններին, վորոնք 1914 թ. Գերմանիայի և մյուս կենտրոնական պետությունների դեմ միասնական ֆրոնտով ելին կովում:

Բոլորի աչքի առաջ տարեց տարի ուժեղանում ե ամենախոշոր կապիտալիստական յերկրների — Անդրայի և Միացյալ Նահանգների փոխադարձ թշնամանքը: Ամերիկական ապրանքները յետպատերազմյան շրջանում դուրս մղեցին անդիմական ապրանքները ամերիկական շուկայից և հաջողությամբ մրցում են նրանց դեմ Հնդկաստանում, Զինաստանում, Ավստրիայում և Հար. Աֆրիկայում, ուր առաջ իշխում ելին անդիմացիք: Գլխավոր պատճառը նրանումն է, վոր Ամերիկան ավելի եժան ե արտադրում: Միացյալ Նահանգների արդյունաբերության գլխավոր ճյուղերում աշխատանքի արտադրողականությունը միջին հաշվով $2\frac{1}{2}$ անգամ ավելի բարձր է, քան Անգլիայում: Այդպես, որինակ, պողպատի արդյունաբերության մեջ բանվորի զուտ արտադրանքը մի տարվա ընթացքում հավասար է 221 ֆունտ ստերլինգի, * իսկ ամերիկական բանվորներինը — 612 ֆ. ստերլինգի: Մ. Նահանգներն այժմ յերեք անգամ ավելի շատ ապրանքներ են արտահանում

* 1 ֆ. ստերլինգը = 9 ռ. 42 կ. վուկով:

Հնդկաստան, քան պատերազմից առաջ: Անգլիական ներմուծումը Զինաստան և Յապոնիա յերկու անգամ պակասեց, իսկ Ավստրալիայում պակասեց համարյա 20%: Արտահանման այդչափ կրծատումը կորուստաբեր ազգեցություն ե անում անգլիական արդյունաբերության վրա և իր ուժեղացող հակառակորդի վերաբերմամբ թշնամանք ե առաջ բերում:

Անգլիան և Միացյալ Նահանգները կատաղի պայքար են մղում նաև հումքի համար, մանավանդ այնպիսի կարևորագույն հումքի, ինչպիսին ե նավթը, կառւչուկն և բամբակը: Նավթի արտահանման շուկաների բաժանման համար պայքար են մղում յերկու համաշխարհային հսկաներ — «Ստանդարտ-Ոլլ», վոր պականում ե ամերիկական կապիտալիստներին, և անգլո-նովանդական տրեստ «Ռոյալ Դեյչ Շել»: Այդ յերկու տրեստները մրցման շնորհիվ ստիպված են նավթի և սրա պրոդուկտների գները իջեցնել: 1927 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերը գներն ընկան $30 - 40\%$: Այդ տեսակ պայքարը, վոր մեծ վնաս ե հասցնում նավթատերերի գրպանին, վոչ մի լավ բան չի նախագուշակում:

Ամերիկան գործադրում ե կառչուկի համաշխարհային արտադրության ավելի քան 75% և ստիպված ե դա գնելու Անգլիայում, վորին պատկանում ե կառւչուկի պլանտացիաների մեծ մասը: Կառչուկի գինը վորոշ բարձրության վրա պահելու համար անգլիացիք ստիմանսափակեցին կառչուկի արտադրությունը:

Այս ժամանակ ամերիկացիք միավորեցին բոլոր գնող ներին վորպեսզի անդիմացիների ախորժակները չափավորեն: Բացի դրանից ամերիկացիք այնուհետև ինենք սկսեցին բացնել կառուչուկը Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի սեփական պլանտացիաներում, վորպեսզի ազատվեն անպիտական կախումից: Նմանապես Ամերիկայում սկսեցին ոգտագործել հին, բանացրածութիւնը:

Մ. Նահանգներն իր հերթին Անգլիային բամբակ են մատակարարում: Անգլիայի տեքստիլ ֆաբրիկներում մշակող բամբակի համարյա յերեք քառորդ մասը ստացվում է Ամերիկայից: Այժմ Անգլիացիք իրենց գաղութներում ուժգին զարգացնում են բամբակաբուծությունը. դա, ինարկե, հարվածում է ամերիկական բամբակագործների շահերին:

Հետագա մրցակցությունը դրամական կապիտալ ներն արտահանելու ուղիով է առաջ գնում: Մ. Նահանգներն այնպես շատացրին կապիտալների արտահանումը, վոր այդ կողմով տիրապետող դիրք գրավեցին Յեվրոպայում, լատինական Ամերիկայի յերկրներում, Յապոնիայում, Զինաստանում և Կանադայում:

Այդ բոլորին ավելանում է ծովերի վրա իշխելու համար մղած պայքարը: Մտաբերենք, վոր համաշխարհային պատերազմում Անգլիայի մասնակցության գլխավոր պատճառներից մեկն եր՝ գերմանական նավատորմիդի աճող ուժից վախենալը: Այժմ նրա հակառակորդն են հանդիսանում Միացյալ Նահանգները:

1922 թ. Վաշինգթոնում կայացավ ծովային գինավորման վերաբերյալ կոնֆերենցիա Անգլիայի, Յապոնիայի և Մ. Նահանգների մասնակցությամբ: Այդ կոնֆերենցիային Մ. Նահանգներն աշխատում եյին զրահանավերի թվով հավասարվել Անգլիայի հետ: 1927 թ. ամերիկացիների առաջարկությամբ Ժընկում յերկրորդ կոնֆերենցիա հրավիրվեց, ուր ամերիկացիք պահանջում եյին նաև զրահանավերի թիվը հավասարեցնել: Սակայն Անգլիան չպիշեց և այդ ըութեյից զինավորման տեսնդն ավելի սաստկացավ:

1928 թ. հունվարի 23-ին ամերիկական ադմիրալ Պլենկետտ հզոր նավատորմիդ կառուցելու անհրաժեշտության մասին Նյու-Յորկի ազգային-հանրապետական ակումբում մի ճառ արտասանեց: Նա հայտարարեց — «Պատերազմի վտանգը շատ ավելի մոտ է այժմ քան յերեկիցե, վորովինետև մենք հետևում ենք մրցակցության առևտրական քաղաքականության և մյուս ազգերին յետ ենք մղում: Այդ տեսակ քաղաքականությունը անխուսափելի կերպով պատերազմ է առաջ բերում, իսկ յեթե չեք ցանկանում պատերազմել, ապա դարձեք վորդ և հողի մոտակա ճեղքը մտեք: Մինչեւ վոր դուք մրցում եք ովկիանոսների վրա գերիշողություն ձեռք բերելու համար, դուք անպայման ստիպված կլինիք պատերազմել. դա նույնքան ճիշտ է ինչպես և այն վոր դուք այս ըութեյին նստած եք այս սենյակում»: Ավելի պարզ անկարելի յետել:

Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև պայքար ե
մզվում Միջերկրական ծովի վրա իշխելու համար, Միջերկրական ծովի վրա գերիշխանությունը Անգլիային հարկավոր ե նրա համար, վորպեսզի ապահովի Հնդկաստանի և հնդկական ծովեզրի գաղութների ուղին: Ֆրանսիայի համար — աֆրիկական իշխումների ուղին՝ Ալժիրի, Մարոկոյի, Թունիսի և Սվեզի ջրանցքով գետի Հնդկա-Չին ու Մադագասկար: Ֆաշիստական դիկտատոր Մուսավիրին յերազում ե հին Հռոմի հոյակապությունը վերականգնել և Իտալիայի ազգեցությունը Բալկանների, Հյուս. Աֆրիկայի և Մերձավոր-Արևելքի վրա տարածել: Իտալիան հումքի կողմից, մանավանդ ածուխի, նավթի և յերկաթի հանքի կողմից աղքատ ե. Նրա ազգաբնակչությունը սաստիկ ածում ե, նրա գաղութները բավականություն չեն տալիս իր լայնացած արդյունաբերության ապրանքները արտահանելու համար: Իտալիայի շահերը ընդհարվում են Ֆրանսիայի շահերի հետ, իսկ Բալկաններում նաև Հարավսլավիայի շահերի հետ, վորին պաշտպանում ե Ֆրանսիան: Ֆաշիստական միլիցիայի որդան «Անտա միլիցիա» 1927 թ. վերջը գրում եր. — «Ֆրանսիան պետք ե պարզ ըմբռնի, վոր Իտալիան չի ցանկանում խեղզվել չափազանց նեղ սահմաններում և վոր Միջերկրական ծովը, վոր պատկանում եր Հռոմին, հանգիստանում ե իրեւ ապագա իտալական կայսրության բազա: Յեթե այդ հարցը հարկավոր ե վճռել պատերամզով, ապա թող Ֆրանսիան իմանա, վոր այն ժողովուրդը, վոր ոժ-

ոված ե ամենահարուստ եներգիայով, համոզված ե իր հաղթության մեջ: Իտալացիք պատրաստ են հետեւելու իրենց առաջնորդի կոչին: Այս խոքերն ել բավական պարզ են:

Գերմանական իմպերիալիզմը չհաշտվեց Վերսալի պայմանագրի հետ և զինվում ե, վորպեսզի հարկավոր ըովելին անցնի այն հակառակորդի կողմն, վորը՝ կապահովի նրան իր գաղութների վերագարձը, արևելյան և արևմտյան սահմանների հարցի վերաբննությունը, և կազմատի նրան միջիարդների հատուցումներից: Գերմանիան խաղում է Անգլիայի և Ֆրանսիայի, Անգլիայի և Միաց. Նահանգների հակառակությունների վրա: Միաժամանակ նա հաճույքով համաձայն ե, վորոշ պայմաններով, Խորհրդային Միության գեմ յելնել:

Հեռավոր արևելքում պայքար ե մզվում Խաղաղ Ռվիանոսի վրա գերիշխելու համար, գլխավորապես Հինական շուկայի համար: Այստեղ ընդհարվում են Յապոնիայի, Անգլիայի և Միաց. Նահանգների շահերը:

ԶԻՆԱՎՈՐՄԱՆ ՏԵՇԻՑՑԻՆ ՄՐՑՈՒՄՆ

Այս փաստերը լիովին բավական են վարպեսզի պատշաճ կերպով գնահատենք պետությունների գործակցության անկեղծությունը Ազգերի լիգայում և թղթի վրա պատերազմը դատապարտող կելլոզի պակտի արժեքը: Իրոք այժմ զինավորման այնպիսի տեսնդային մրցումն ե կատարվում, վոր 1914—18 թ.թ. պատերազմի դրդիչները յերազում անգամ չելին կարող տեսնել:

Ահա թվանշանները. — 1913 թ. ֆրանսիայի ռազմական ծախքերը 280 միլիոն դոլար եյին կազմում. 1926 թ. — 408 միլիոն դոլար. Անգլիան առաջ ծախսում եր 375.400.000 դոլար, այժմ 559.300.000 դոլար. Իտալիան — 125.100.000 և 260.200.000, Միացյալ Նահանգները — 293.600.000 և 781.000.000, Յապոնիան — 58.600.000 և 226.900.000 դոլար. Գերմանական զորքի (այժմ 100.000 մարդ) ծախքերը 800 միլիոն մարդ ավելի յէ, քան 1913 թ., յերբ գերմանական զորքը բաղկացած եր 600.000 մարդուց:

Մանավանդ աչքի յե ընկնում Անգլիայի և Միացյալ Նահանգների ծովառազմական ծախքերը: 1913 թ. Անգլիան ծախսում եր 236.700.000 դոլար, 1928/29 թ. 286.500.000 դոլար, իսկ Միացյալ Նահանգները — 141.600.000 և 391.100.000 դոլար:


Հստ անգլիական «Ստատիստ»-ի 1926 թ. մարտի 24-ի տվյալների, Միացյալ Նահանգները աղաքակչության մի մարդու վրա ծախսում են տարեկան 14 ռուբլի, Անգլիան — 27 ռուբլի, Ֆրանսիան — 18 ռուբլի, Իտալիան — 12 ռուբլի: Հստ նույն տվյալների, ԽՍՀՄ ծախսում ե 6 ռուբլի, սակայն այդ թիվը չափազանցված ե:

Հինգ գլխավոր պետությունների (Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Մ. Նահանգների և Յապոնիայի) ցամաքի զորքերում 1913 թվին կային 1.827.000 մարդ, իսկ 1928 թ. 2.077.000 մարդ: Այստեղ պետք ե ավելացնել 20.000.000 պահեստի զինվորական ծառայողներ: Այդ չորս պետություններում (բացի Յապոնիա-

յից) կան 3.500.000 ֆաշիստական զինվորական միությունների անդամներ, զորոնք պատերազմի դեպքում բոլորովին պիտանի կաղը են կազմում:

Իմպերիալիստներն իրենց տրամադրության տակ ունեն նորագույն տեխնիկայի բոլոր հաջողությունները:

Պետությունների ռազմական ծախքերը 1913 և 1928 թ. թ.



1913 Ֆրանսիա	1928 Անգլիա	1913 Անգլիա	1928 Իտալիա	1913 Հ. Ամերիկայի Բրազիլիա	1928 Միաց.-Նահ.	1913 Գերմանիա
-----------------	----------------	----------------	----------------	----------------------------------	--------------------	------------------

Բացի տանկերից, զոր լայն ծավալ ստացան համաշխարհային պատերազմի վերջը, զորքերում մտցված են արագաշարժ տանկետներ, զոր մի ժամկա ընթացքում 50 կիլոմետր են անցնում: Գործադրվում են նաև

Ջրհողային տանկեր, վորոնք թե ցամաքի վրա և թե ջրի տակ կարող են շարժվել։ Շատ ավելի կատարելագործված ե ավիացիան։ Պատերազմի առաջին կիսամյակին ավիացիայի արդյունաբերությունը կարող է մինչև 100,000 այերոպալան տալ։

Սոսկալի դժբախտություններ ե սպառնում պատերազմի քիմիական միջոցների գործադրությունը։ Ռազմական գործողությունները հայտարարելիս մեծաքանակ ոդային եսկարաքաներ թոփչք են գործելու դեպի հակառակորդի հեռավոր թիկունքը և քաղաքների և գյուղերի վրա թափելու յեն հրկիվիչ, թունավոր, խեղզիչ, ծխահար, պայմուցիկ և այլն ռումբեր։ Մշակվում ե՝ թշնամու յերկրներում համաձարակներ տարածելու դիվական պլան։ Խաղաղ բնակչությանը սպառնում են տիֆի և խոլերայի համաձարակներ՝ շնորհիվ թունավորված գետերի և հորերի։ Նրան սով ե սպառնում, վորովհետև մշակվում ե ցանքսերը վոչնչացնելու (այերոպալաններից վնասիչներ ցրելու միջոցով) պլանը։ Սպառնում ե ժանտախտը — մտադրվում են այերոպալաններից ժանտախտով վարակված մկներ վայր գցել և այլն։

Եեկ այդ բոլորը — հանուն բուրժուազիայի վոսկու, հանուն բուրժուազիայի գերշահույթների։

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈՆՏ ԸՆԴԴԵԼ ԽԾՀՄ

Համաշխարհային բուրժուազիան չհաշտվեց և յերբեք ել չի հաշտվի նորհրդային Միության գոյության հետ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը նյութական ահագին վնաս հասցըց արտասահմանյան կապիտալիստներին։ Յարական Ռուսաստանը կիսազաղութ եր ներկայացնում արտասահմանյան՝ գլխավորապես Թրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի՝ առևտրական, արդյունաբերական և գինանսական կապիտալի համար։

Յարական կառավարության որոք ոտարազգիներն ընդդարձակ չափով շահագործում եյին Ռուսաստանի հողի խորքերը։ Նրանց եր պատկանում Թոնբասի շախտաների, Կրիվորոդի հանքերի, Բաղվի և Գրոզնիինավթի, Ռուբալի և Սիբիրի վոսկու և պլատինի հարստությունների մեծ մասը։ Այժմ այդ բոլոր հարստությունները ազգայնացված են և գտնվում են Խորհրդային Խշանության ձեռքում, վորը ի չիք հայտարարեց ցարական և Ժամանակավոր կառավարության պատերազմական և նախպատերազմյան պարտքերը (12 միլիարդ ռուբլի վոսկով)։

ԽԾՀՄ գոներն այժմ ել փակ չեն ոտար պետությունների համար։ Սակայն մենք վորոշ պայմաններ ենք գնում նրանց առաջ։ ԽԾՀՄ մեջ թույլ ե տրված ներմուծել արտասահմանյան լոկ այնպիսի ապրանքներ, վորոնց ներմուծումը վոչ միայն չի թուլացնում, այլ ընդհակառակն, նպաստում ե Խորհրդային արդյունաբերության և գյուղական տնտեսության պլանային և արագ ինդուստրիալիզացիային։ Այդ տեսակ ապրանքների թվին են պատկանում մեքենաները, վորոնց մենք դեռ անկարող ենք մեր սեփական միջոցներով

շինել, ծանր ինդուստրիայի համար հարկավոր սարքավորումը և այն։ Արտաքին առեւրի մոնոպոլիայի ամբողջ սիստեմը կառուցված է ԽՍՀ Միությունը արտասահմանի կախումից ազատագրելու և աստիճանաբար եկոնոմիական լիակատար ինքնուրույնության անցնելու վրա։ Այդ տեսակ տնտեսական քաղաքականություն, ինարկե, դուր չի գալիս արտասահմանյան կապիտալիստներին։

Մենք այժմ ել չենք մերժում ոտարազգի կապիտալիստներին կոնցենտրացիաների վերցնել՝ հողի խորքերը, անտառներն և ուրիշ բնական հարստությունները մշակելու համար։ Սակայն այդ կոնցենտրացիաների անժխտելի պայմանն ե — վորպեսզի նրանք շահավետ լինեն մեր ժողովրդական տնտեսության համար, վորպեսզի աշխատանքի կողեքսը պահպանվի և այն։ Այդ պայմաններն ամենակին չեն համապատասխանում ոտարազգի կապիտալիստների գաղութային ախորժակներին։

Բայց միջազգային բուրժուազիայի՝ ԽՍՀՄ դեմ տածած թշնամանքի գլխավոր պատճառը — Հոկտեմբերի հեղափոխական ազգեցությունն ե ամբողջ աշխարհի կեղեքված և լլկված մասսաների վրա։

Ահա Հոկտեմբերի հեղափոխությունից հետո կապիտալիստական և գաղութային յերկրներում տեղի ունեցած հեղափոխական ապստամբությունների չափազանց համառոտ, վոչ լրիվ ցանկը. —

1918 թ. Ֆինլանդիայում կատարվեց պրոլետարական հեղափոխություն, Յապոնիայում — սովորապես

բություններ, Ավստրիայում և Գերմանիայում — հեղափոխություններ։ 1919 թ. — Բերլինի պրոլետարիատի կոփառերը սոցիալ-դեմոկրատական կառավարության և կայզերի գեներալների դեմ, խորհրդային հանրապետությունների հայտարարությունում վենդրիայում և Բավարիայում, ապստամբություններ Հյուսիսային Բեռլինարբիայում, Կորեայում, Յեղիպտոսում, Հնդկաստանում։ 1920 թվին — ազգային հեղափոխություն Տաճկաստանում, արդյունաբերական և գյուղատնտեսական բանվորների ձեռքով ֆարբիկների և գործարանների ու կալվածների գրավություն Խայլիայում։ 1921 թ. — բանվորական ապստամբություն Գերմանիայում։ 1923 թ. — ապստամբություններ Բոլղարիայում և Կրակովում, հեղափոխական կոփառեր Սակսոնիայում և Թյուրինգիայում։ 1924 թ. — ապստամբություններ Եստոնիայում, Թաթարստանարում (Իումինիա) և Հնդկաստանում։ 1925 թ. — ապստամբություններ Մարոկկոյում և Սիրիայում։ 1926 թ. — մասսայական հոգություններ Կորեայում, ընդհանուր և հանքափորների գործադուլը Անգլիայում։ 1927 թ. — ապստամբություններ Վեննայում և Ինդոնեզիայում։ 1928/29 թ. — նեգրների ապստամբությունը Փրանսիական Կոնգոյում, Բերլինի բանվորների հերոսական պայքարը մայիսեկտյան բարիկադների վրա 1929 թ., Համաշխարհային իմպերիալիզմի համար ահազին վտանգ և ներկայացնում չինական մեծ հեղափոխությունը, վոր սկսվել է 1925 թվից և մինչեւ որս ել սպառնալիքի տակ և պահում կապիտալիստական աշխարհին։

1929 թ. գարնան Հնդկաստանում բարձրացած նոր հեղափոխական ալիքը, վորին գլուխ և կանգնած արդյունաբերական պրոլետարիատը:

Կապիտալիստական աշխարհի և մեր փոխադարձ հարաբերությունները յերեք շրջան անցան: Առաջին շրջանը՝ 1918 թ.—1921 թ. իմպերիալիստների ակնհայտ զինված կռվի շրջանն է Խորհրդային պետության դեմ: Այդ արշավանքը սկսեցին Գերմանիան և Ավստրիան, վորոնք գրավեցին Ռուսայինան, Բելոռուսիան և Մերձ-Բալտիկը: Սակայն Գերմանիայի և Ավստրիայի ռազմական խորտակումից և հեղափոխությունից հետո, նրանք շտապ ազատեցին գրաված շրջանները: Ուռուսաստանի նախկին դաշնակիցները — Ֆրանսիան, Անգլիան, Միացյալ Նահանգները և Յապոնիան խուժեցին հյուսիսից, Արխանգելսկի և Մուրմանի վրայով, գրավեցին Հարավային Ռուսայինան և Ղրիմը, Անդրկովկասն և Թուրքիստանը, յապոնական բանակը գրավեց Հեռավոր Արևելքը: Նրանք աջակցում են ինքողով և զենքով Դենիկինի, Վրանգելի, Յուդենիչի, Կոլչակի, Պետլյուրայի և այլն սպիտակ բանակներին, կազմակերպեցին Զեխ-Սլովակների ապստամբությունը, Յարուժավի ապստամբությունը, դավադրություններ և մահափորձեր Մոսկվայում և Լենինգրադում: Սակայն արտասահմանյան իմպերիալիստների և ոռուս հականերափականների — դրանց մեջ հաշված նաև մենքիներին և եսերներին — միասնական ֆրոնտը խորտակվեց շնորհիվ Կարմիր Բանակի և ամբողջ բանվոր

դասակարգի անորինակ հերոսության: Հարավային Ռուսայինայում և Ղրիմում իմպերիալիստների անհաջողությանը նպաստում եր ոտարազգի զինվորների և մատրոսների յեղայրական համամտությունն, վորոնք հրաժարվեցին կռվել ոռուսական հեղափոխության դեմ: Բայց իմպերիալիստական այդ ավաղակային հարձակման հետևանքով մենք տվինք հսկայական զոհեր — կոտորվեցին տասնյակ հազարավոր բանվորներ և գյուղացիներ, չհաշված տասնյակ միլիարդների հասնող նյութական կորուստը:

Հասավ յերկրորդ շրջանը, այսպես կոչված շունչ առնելու շրջանը: Յեկրոպական պետությունները ճանաչեցին Խորհրդային Միությունը և իրենց դիվոմատիական ներկայացուցիչներին Մոսկվա ուղարկեցին. նրանք փոխեցին տակտիկան, հուսալով, վոր մենք անկարող կլինենք վերականգնել քայլայված տնտեսությունը: Յեկ վաղ թե ուշինքներս կդնանք և գլուխ կխոնարհենք կապիտալիզմի առաջ: Սակայն այդ ել չոգնեց: Բուրժուազիան համոզվում է, վոր նա սխալվել ե: Մենք վոչ միայն վերականգնեցինք պատերազմի և ոտարների ներխուժման հետևանքով քայլայված մեր տնտեսությունը, վոչ միայն հասնաք նախատերազմյան մակարդակին, այլ նրանից նույնիսկ առաջ անցանք: ԽՍՀՄ տնտեսական զարգացումն ավելի արագ ե ընթանում քան արտասահմանյան յերկրներում, իսկ աշխատանքների իրագործվող հինգամյա պլանը խոս-

տանում ե սոցիալիստական շինարարության արտա-
սովոր բարգավաճում:

Յերողդ, ներկա շրջանը սկսվում է 1927 թվից,
անգլո-խորհրդային հարաբերությունների խզման մո-
մենտից: ԽՍՀՄ դեմ նորից սաստկացան պլովկա-
ցիաները. դավագրություններ, մահափորձեր, զրպար-
տության նոր հեղեղներ կապիտալիստական և սոցիալ-
դեմկրատական մամուլի մեջ սկսեցին իրար հաջորդել:
Միջազգային բուրժուազիայի մտադրությունները ամե-
նապայծառ կերպով արտահայտված ե քրանսիական
մարշալ Ֆոշ՝ անգլիական «Բեֆերի» թերթի թղթակցի
հետ ունեցած զրույցի մեջ 1927 թ. ոգոստոսին:
Ֆոշը հայտարարեց, վոր յեթե 1919 թ. նրան ազա-
տություն տային, նա անմիջապես վերջ կդներ ուու-
սական հեղափոխության, կզիներ Ռուսաստանի հարևան
ազգերին և մի հարվածով կջարդեր նրան: «Դժբախ-
տաբար, — ավելացրեց Ֆոշը, — ինձ թույլ չտվին գոր-
ծել»: Նա պատմեց նաև, վոր հանդիպել ե քաղաքա-
կան գործիչներից մեկին, վորը իր ժամանակ հակա-
ռակ եր նրա պլանին: Այժմ նա շատ ափսոսում ե
վոր չհամաձայնվեց ամբողջ աշխարհում բոյզկիզմը
վոչնչացնելու առաջարկին: «Սակայն այժմ ել ուշ չե, —
նկատեց Ֆոշը, — հարկավոր ե միայն պայմանավորվել
Անգլիայի հետ»:

Այդպիսի պայմանավորում տեղի ունեցավ 1928 թ.,
նա կոչվում ե անգլո-ֆրանսիական գործակցություն
և վերացնում ե այդ յերկու իմակերիալիստական պե-

տությունների միջև մի շարք տարածայնություններ՝
յեվրոպական հարցերում և սպառազինման վերաբեր-
յալ, և մի ծայրով ուղղված ե Միացյալ Նահանգների,
իսկ մյուս ծայրով ԽՍՀՄ դեմ:

Բանվորական կառավարության կազմակերպումն
Անգլիայում՝ 1929 թ. մայիսի 30-ի ընտրություննե-
րից հետո՝ հավանորեն կվերականգնի դիպումատիա-
կան հարաբերությունները ԽՍՀՄ հետ: Սակայն բան-
վորական կառավարության՝ 1924 թվի «խաղաղ գործ-
նեյության փորձը ցույց ե տալիս (այն ժամանակ
Մակղոնալդը առաջարկում եր կառուցել ուղղմական
նավատորմիդ՝ գործազրկության դեմ պայքարելու
պատրվակով), վոր միջազգային պարագաներում վոչ-
ինչ եյական փոփոխություններ չե կարելի սպասել:
Ինչպես և մինչև այժմ, մենք պետք ե զգաստ լինենք,
վորովհետև II Խնաերնացիոնալը, վորին պատկանում
ե անգլիական բանվորական կուսակցությունը, իմպե-
րիալիստների ամենագործունյա ագենտներից մեկն ե
հանդիսանում նոր պատերազմներ նախապատրաստելու
գործում:

ԲՈՒՐՃՈՒՄՁԻՑ ԱՎԱՆԳԱՐԴԸ

ԽՍՀՄ դեմ պատերազմի անմիջական սպառնալիքն
ծագում ե մեր արևմտյան սահմանակից պետություն-
ներից — Ֆինլանդիայից, Եստոնիայից, Լատվիայից,
Լեհաստանից և Ռումինիայից: Այդ յերկրները լոկ

թղթի վրա յեն անկախ, խոկ և կոնումիական և քաղաքական տեսակետից նրանք իրոք կախումն ունեն Անդիմայից և ֆրանսիայից:

Եստոնիայում բանկային և արդյունաբերական կապիտալները ամբողջապես կախումն ունեն անգլիական կապիտալից. Եստոնիայի զինավորումը անգլիական է: Այժմ Եստոնիան ճեռնարկում ե ստրատեգիական յերկաթուղիների կառուցման: Ֆինլանդիան փոխարինություններ ե ստանում Անգլիայից. իր զորքի և նավատորմիղի վերակազմությունը հանձնարարել ե Անգլիային: Լատվիայում ստեղծվել ե անգլիական բազա, վորպեսզի հենց այնտեղ պատրաստվեն այերոպլաններ, հիգրոպլաններ և ռազմական պաշարներ: Ամեն տարի անգլիական նավատորմիղն այցելում ե բարտիական պետությունների նավահանգիստները և մանյովրներ ե կազմակերպում Բալտիկ ծովում — ռազմական գործողությունների այդ ապագա թատերաբեմում:

Ռումինիայում և Լեհաստանում գերիշխում ե ֆրանսիական ազգեցությունը: Ֆրանսիական պարլամենտի կոմունիստական պատգամավոր ընկ. Կաշենը 1928 թ. դեկտեմբերի 4-ին արտասանած ճառում մի շարք փաստեր բերեց, թե ինչպես Ֆրանսիան աջակցում եր Լեհաստանին՝ լեհ-խորհրդային պատերազմի ժամանակ 1920 թ.: Նա, վարչավայի ֆրանսիական զինվորական միսիայի սպա Ռիվիեր դ'Ետշեզուենի «Լեհաստան» վերնագրով գրքից հատվածներ բերեց, ուր ասված ե. —

«Մեզ վրա թանգ նստած դաշնակցին մեր բացթողած զումարները միլիարդների յե հասնում (ֆրանկներով): Նախ հիշեցնենք 1920 թ. գարնան, Գալլերի բանակի համար կատարած ծախքերը. — Ֆրանսիան լեհական կառավարությանը տվեց 327.500 հրացան, 2.800 պուլեմյոտ, 42.000 ատրանակ, 518.000.000 փամփուշտ, 1494 թնդանոթ, 10.000.000 ռումբ, 350 այերոպլան, 250 ավտոմոբիլ, 800 բեռնավտոմոբիլ, 4.500 պավողկա, դաշտային բուժարաններ, սպիտակեղեն, շինեներ և այլն և այլն: Յերեք ամսից հետո լեհական զորքի ընդհանուր փախստի ժամանակ այդ բոլոր ռազմամթերքը թողեցին բոյլչեիկների ձեռքին: Հարկավոր յեղավ այդ բոլորը փոխարինելինարկե ֆրանսիայի հաշվին: Յեթե ավելացնենք դրա վրա մեր բարեսիրտ և վատատեղյակ պարլամենտի բացթողած կրեդիտները, կտեսնենք, վոր նրանց տվել են 1920 թ. 400.000.000, 1921 թ. 400.000.000, 1922 թ. 600.000.000, 1923 թ. մարտին — 400.000.000, հունիսին — 100.000.000 ֆրանկ»:

Ֆրանսիական կառավարությունը շարունակում ե Լեհաստան, Ռումինիա և ուրիշ յերկրներ մեծ քանակությամբ զենք ուղարկել: Լեհաստանի համար Շնայդերի գործարանը պատրաստում ե զենք, Ռենոյի գործարանը — ավտոպուլեմյուններ և այերոպլանի մոտորներ և այլն: Լեհաստան զենք ուղարկելու համար Յերբուգում կա ծովային բազա և բացի այդ նոր բազաներ են ստեղծվում Մերձբալտիկում և Սալոնիկում:

ԽՍՀՄ դեմ Լեհաստանի ռազմական պատրաստություններն ուժեղացան 1926 թ. Պիլսուդսկու կատարած փաշիստական հեղաշրջումից հետո: Լեհաստանի զինվորական կլիկան և կալվածատերերը, վորոնք յերազում են Բելոռուսիայի, Վալինիայի, Կիևչինայի և Պադովայի գյուղացիներից յետ խել իրենց նախկին կալվածները, պահանջում են Լեհաստանի 1772 թվի սահմանների վերականգնումն—Մեծ Լեհաստանի ստեղծումն Բալտյան Տովից մինչեւ Սև ծովը: Անցյալ տարի Վալինիայի վայեկողա Յուզեֆսկու հայտարարած պահանջը՝ վորապեսզի Խորհրդային Ռուկրայինան միացվի Լեհաստանի հետ, Լեհաստանի մերժումը՝ մեր դեմ չարձակվելու ակտը ստորագրելու, սպիտակ եմիգրանտներին հովանավորելը՝ մեր դիպոմատիական ներկայացուցիչների վրա մահափորձ կատարելու դեպքերում, լեհական պաշտոնական անձանց մասնակցությունը պետյուրականների և վրացի մենշևիկների յելույթներում, լեհական բուրժուական և «սոցիալիստական» մամուլի լվտի տոնը, բելոզվարդեյական տեսողիստ Վոյցեխովսկու վրա կատարած դատի կոմիզիան և այդ դատավճռի՝ վերջերս արած կրծատումը — այդ բոլորը ցույց են տալիս, վոր պահերի Լեհաստանի կողմից պատերազմի վտանգը սաստկանում ե:

Ուումինիան, վոր կապված ե Ֆրանսիայի և Լեհաստանի հետ ռազմական պայմանագրերով, նույնպես մատակարարվում ե Փրանսիական վոսկով և զենքով, Ֆրանսիական իմպերիալիստներին ԽՍՀՄ դեմ դալիք

պատերազմի համար թնդանոթի մսացու տալով, ուումինական կառավարությունը հույս ե տածում վերջնականապես զրավել Բեսարաբիան, համառորեն մերժելով Բեսարաբիայի ազգաբնակչության համաժողովրական քվեարկություն կատարելու մեր առաջարկը, թե ում կողմն ե ցանկանում նա մնալ — Ուումինիայի թե ԽՍՀՄ:

Ուումինո-լեհական դաշնի առթիվ Բուխարեստի բուրժուական «Ունիվերսալ» թերթը 1928 թ. հոկտեմբերի 2-ին գրում եր.

«Լեհաստանի և Ուումինիայի միջև կոնտակտը հաստատված եւ Մեր գերը կայանում ե նրանում, վորապեսզի ճակատից հարվածենք Ուումաստանը և դիմադրենք՝ մինչև վոր շահագրգուված մեծ պետությունները վրա կամանեն: Բայց վորովհետեւ թվով մենք միշտ զիջելու յենք Ուումաստանին, ինչ գնով ել վոր լինի՝ մեզ անհրաժեշտ ե ռազմական ամեն տեսակի մատերիալ, ամեն աեսակի մեծաքանակ ռազմական մատերիալ»:

Այդ խոսքերումն ե գտնվում մեր արևմտյան հարևանների անընդհատ սպառազինման բացատրության բանալին, վորոնք ամեն կերպ ճգնում են ավելացնել իրենց զորքի թիվը և լայնացնում են ռազմական արդյունաբերությունը: 1928 թ. ռազմական պիտույքների համար Լեհաստանը ծախսել է 1.025.000.000 զլոտա, կամ իր ամբողջ բյուջեյի 41,3%: Ուումինիան նույն տարում ծախսել է 49.000.000 դոլար, կամ իր բյուջեյի 20,4%:

1923 թ. մինչև 1918 թ. ֆինլանդիայի, Նոտունիայի, Լատվիայի, Լեհաստանի և Ռումինիայի գորքերի թիվը 431.000-ից հասավ 584,500-ի, այսինքն 35% ավելացավ. իսկ ռազմավարժություն անցած պահեստի թիվը կազմում է 4,500,000 զինվոր և ավելի քան 100,000 սպաներ:

Բարտիական յերկրների, Լեհաստանի և Ռումինիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները վոչ միայն չեն պայքարում պատերազմի պատրաստության դեմ, այլև ամեն կերպ աջակցում են կառավարությունների զինավորման գործին: Իսկ Փրանսիական սոցիալիստների վեցը Բոնկուրը բացարձակ վողջունում է լեհական բանակը, վորպես «յեվրոպական քաղաքակրթության ավանդուստ ընդդեմ արևելյան բոյլիկոմի»:

ԹԻԿՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈԳՄԵՐ

Պատերազմի համար բավական չեն միայն բանակներ ունենալ: Հարկավոր ե ապահովել պատերազմի ժամանակ գործարանների և տրանսպորտի աշխատանքների անընդհատ ընթացքը, հարկավոր ե անընդհատ մատակարարել ֆրոնտը մարդկային ճատերիալով, հարկավոր ե խաղաղություն պահպանել յերկրի ներսում:

Պատերազմի նախապատրաստման այդ մասը, վոր վոչ պակաս կարևոր ե քան զինվելը, բուրժուազիան կատարում ե ամենից առաջ համապատասխան ագի-

տացիայի միջոցով: Թատրոն, կինո, գրականություն, մամուլ, դպրոց և յեկեղեցի — ամբողջովին ծառայում են իմակերիալիզմին: Նրանց պաշտոնն ե հայրենասիրական գաղափարներ ներշնչել մասսաներին, մանավանդ յերիտասարդության: Մի կողմից սեր են զարթեցնում դեպի հայրենիքը, մյուս կողմից ատելություն ցանում դեպի մյուս ազգերը, վորոնք իր թե մտադիր են խլել նրանց հայրենիքի փառքը, անկախությունը և բարգավաճումը: Ռազմական տրամադրություն պահպանելու համար կազմակերպվում են շքեղ զորահանդեսներ, ստեղծվում են «անհայտ զինվորի գերեզմաններ», մեծ հուշարձաններ, վորոնց տակ թաղած են վորեւ ակոպում գտնված՝ համաշխարհային պատերազմի զոհերի վոսկորներ: Այդ հուշարձանների մոտ մինիստրներ, գեներալներ և պատգամավորներ բոցավառ ճառեր են արտասանում հանուն «սիրած» հայրենիքի ինքնազոհողության համար:

Սակայն այդ տեսակ ագիտացիան ինկատի ունի խոշոր և մանր բուրժուազիայի համեմատաբար նեղ շրջան: Բանվորների և գյուղացիների հետ, մանավանդ համաշխարհային պատերազմի աղետներից հետո, հարկավոր ե ուրիշ լեզվով խոսել: Այստեղ բուրժուազիային ոգնության են զալիս այսպես կոչված պացիֆիստները (խաղաղության կողմանակիցները) և սոցիալ-դեմոկրատները: Նրանց պաշտոնը կայանում ե նրանում, վորպեսզի խաղաղության, զինաթափման և պատերազմի վտանգի դեմ պայքարի վերաբերյալ ֆուազներով

մասսաների ուշադրությունը շեղեն պատերազմի պատրաստությունից և թուլացնեն նրանց դիմադրությունը իմպերիալիստական նոր դավադրությանը:

Պացիֆիստները և սոցիալ-դեմոկրատները մասսաներից ծածկում են ամենազլիսավորը: Նրանք չեն առում մասսաներին, վոր իմպերիալիստական պատերազմը դասակարգային բնույթ ե կրում, վոր պատերազմները անխուսափելի յեն՝ քանի գոյություն ունի կապիտալիստական իրավակարգը, վոր նրանց խափանել կարելի յե՝ միմիայն տապալելով այդ իրավակարգը:

Սոցիալ-դեմոկրատական թերթերը լի յեն հետեւյալ տեսակի լոգունգներով. «պատերազմներն այլևս յերբեք չպետք ե տեղի ունենան», «թող կորչի պատերազմը»: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները ստորագրություններ են հավաքում կառավարություններին ներկայացնելու դիմումների տակ՝ զինավորումները կրծատելու համար, մասնակցում են այն ժողովներին, կոնֆերենցիաներին և կոնֆերեններին, ուր դատավարում են պատերազմը և ընդունում են ամեն տեսակ ճոռում բանաձեռք: Մասսաներում վստահություն են սնուցանում Ազգերի Լիգայի վերաբերմամբ, քարոզվում ե քաղաքացիական խաղաղության դադարարը, մի խոսքով արվում ե ամեն ինչ, վոր պեսզի թագանեն ապագա զինված ընդհարումների դասակարգային բնույթը: Սակայն այդ ինարկե չի խանգարում գերմանական սոցիալ-դեմոկրատիային, իր

յերկրի ճակատագրի դեկավարին, նոր զրահանավեր կառուցել: Ֆրանսիական սոցիալիստները, անդիմական բանվորական կուսակցությունը, II Խառերնացիոնալի ուրիշ կուսակցությունները նույնպես աջակցում են զինավորման՝ հետեւյալ լոգունգով — «պատերազմ չենք ուզում, բայց անհրաժեշտ ե բուրժուական հայրենիքի ինքնապաշտպանությունը զորեղացնել»: Խորհրդային Միության դեմ զրպարտության և հալածանքի կամպանիայում սոցիալ-դեմոկրատները իրենց յեռանդով գերազանցում են բուրժուազիային:

Սակայն լոկ ազիտացիայով, վորպես պատերազմի նախապատրաստման միջոցով, թիկունքի խաղաղությունն ապահովելու համար, շատ ել հեռու չես գնաւ: Բուրժուազիան հասկանում ե այդ և մի շարք միջոցներ ե ձեռք առնում բանվորա-գյուղացիական մասսաները սանձահարելու համար այն դեպքում, յերբ նրանք հեղափոխական դիմադրություն ցույց կտան պատերազմին:

Ամեն տարի բոլոր կապիտալիստական յերկրներում մեծանում ե ֆաշիստական կազմակերպությունների թիվը, վորոնք զինված են և վարձատրվում են կապիտալիստների հաշվին: Այդ կազմակերպությունները կրկնակի նպատակ ունին: Խաղաղ ժամանակ նրանք ծառայում են բանվորական շարժման դեմ կռվելու համար, գործադուլների ժամանակ շորեյկ-ըրբեխերներ մատակարարելու համար, դեմոնստրացիաներ և ժողովներ ցըելու համար և այլն, հանդիսա-

նալով կողմանակի ապարատ՝ պոլիցիան և ժանդար-
մերիան ուժեղացնելու համար։ Պատերազմի ժամա-
նակ — նրանք պատրաստի կադր են ռազմա-արդյունա-
բերական ձեռնարկությունները, ջրմուղիները, ելեք-
տրական կայաններն և յերկաթուղիները պահպա-
նելու համար։ Նրանց կարելի յե ոդտագործել նաև
անմիջական ռազմական գործողությունների համար։
Խտավայում բացի ֆաշիստական կուսակցությունից,
վոր 600,000 անդամ ունի (այդ թվում՝ կանայք
կազմում են 75,000), գոյություն ունի նաև հատուկ
ֆաշիստական միլիցիա 300,000 մարդուց։ Ամերիկա-
յում գոյություն ունեն յերկու զորեղ կուսակցու-
թյուններ — Կու-կուկս-կլան և Ամերիկական Լեգիոն,
վորոնք ավելի քան 2,000,000 անդամ ունեն։ Միաց-
յալ Նահանգներում ավելի քան 380,000 կանայք կան
ֆաշիստական կազմակերպությունների մեջ։ Դրանք
հնչուն անուններ են կրում — «Ամերիկական հեղա-
փոխության դուստրներ», «Արյունուշտ ամազոնկա-
ների միություն» և այլն։ Գերմանիայում «Պողպատի
Սաղավարտ», «Յերիտասարդ Գերմանական Որդեն»,
«Վերփոյլֆ» և այլ կազմակերպություններ միավորում
են մոտ 4,000,000 մարդ։ Գերմանական «Թագուհի
Լուիզայի անվան կանանց միությունը» յերիտասարդ
կանանց շրջանում կազմակերպում են հրացանաձգու-
թյան վարժություններ և ձգտում են, վոր կանանց
վրա ևս տարածվի զինվորական պարտադիր վարժու-
թյունների վերաբերյալ որենքը։ Անդիայում գոյու-

թյուն ունի «անգլիական ֆաշիստների» միություն,
վորը բացարձակ կոչ ե անում «զորեղ ուժեր կազմա-
կերպել սոցիալիզմի և բոլշեկոմի աճող վտանգը վե-
րացնելու համար»։ Ֆինլանդիայում կանոնավոր զոր-
քին կից կա և 100,000 ֆաշիստական զինվորներ (շյուց-
կոր)՝ զինվորական կազմակերպությամբ, նաև կանացի
ֆաշիստական կազմակերպություններ, թվով 40,000
մարդ։ Եստոնիայում կա 30,000 կայցելիտ, շյուցկորի
նմանությամբ, Լատվիայում — 35,000 այզարգներ։
Լեհաստանում կան 24 ֆաշիստական կազմակերպու-
թյուններ — զինվորների միություն, «Սոկոլ» (բազե)
ընկերություն, լեգիոններների միություն, լեհական
հանրապետության լեգիոն և այլն։ 1928 թ. նրանց
անդամների թիվը հասնում եր 150,000 մարդու։
Ռումինիայում նոր ազգային-զյուզացիական կառավա-
րությունը պաշտոնապես կազմակերպում ե ֆաշիս-
տական ջոկատներ, իտալական ջոկատների տիպով,
«Քաջերի գվարդիան», քաղաքի և գյուղի բուրժուա-
զիայի զավակներից՝ ընդդեմ ներքին և արտաքին թշշ-
նամիների։ Լեհաստանում ֆաշիստական կազմակերպու-
թյունները միավորում են մոտ 500,000 մարդ։ Այդ
թվումն ե նաև ԼՍԿ (Լեհական սոցիալիստական կու-
սակցություն) մարտական դրուժինաները, վորոնք
հոչակված են դեմոնստրացիայի ժամանակ բանվորնե-
րին հրացանազարկ անելով։

Ստեղծելով և ամրացնելով այդ սև զվարդիան,
բուրժուազիան գործադրում ե բացարձակ սպիտակ

տեռոր՝ աշխատավորների դասակարգային հեղափոխական կազմակերպությունների դեմ, վորոնք դիմադրություն են ցույց տալիս պատերազմի պատրաստությանը։

Արյունաբու դահճճներից մեկը, Բոլղարիայի միակառ-նախարարական լյապչև 1928 թ. դեկտեմբերին լկով կերպով հայտարարեց բանվոր յերիտասարդությանը, վորը յեկել եր ամնիստիա պահանջելու նրանից。—

«Մինչև վոր վերջ չտաք՝ ԽՍՀՄ հետ պատերազմելու դեմ ազիտացիային, սպիտակ տեռորը չենք վերջացնի»։ Այդ խոսքերը տպագրվեցին ամբողջ աշխարհի բանվորական թերթերում։

Բուրժուազիան այս ամենեւին չի պահպանում իր սեփական որենքները, խախտում է ժողովների, միությունների, մամուլի ազատությունը, պատգամավորների անձեռնմխելիությունը։ Առանձին հալածանքների յեն յենթարկվում կոմկուսակցությունը, հեղափոխական պրոֆմիությունները, կոմսոմոլը։ Ամեն մի որ լուր է ստացվում մասսայական ձերբակալությունների, թերթերի փակման, կազմակերպությունների ցրման մասին։ Ֆրանսիայում ներկայումս մի քանի տարով բանտարկված են պատերազմի պատրաստության դեմ մղած պայքարի համար պատգամավորներ Անդրե Մարտի, Կարլո և ուրիշները։ Ֆրանսիական «Հյումանիտե» թերթը հակապատերազմական հողվածներ զետեղելու համար տասնյակ դատական պրոցեսներ ունի։ Գերմանիայում փակված է կոմկու-

սակցության որդան «Խոտե Ֆանե», կասեցված է Կարմիր Ֆրոնտովիկների Միությունը։ Լեհաստանում և Ռումինիայում սահմանամերձ շրջանում պաշտողական դրություն է հայտարարված։ Արևմտյան Ուկրայնայում և Բելոռուսիայում բանտերը լցված են։ ցրեցին, քարուքանդ արին վոչ միայն քաղաքական հեղափոխական կազմակերպություններն, այլև կուլտուրական-լուսավորական միություններն, կոռպերատիվներ և այլն։ Այն գյուղացիներին, վորոնց հոգերը գտնվում են նախկին ոռւս-գերմանական ֆրոնտի շերտում, արգելված են հարթել համաշխարհային պատերազմի ժամանակից մնացած խրամատները։ Լեհաստանում ախրանկան անվստահելի անձանց ցուցակներ են կազմել, վորոնց պետք են ձերբակալել՝ պատերազմ հայտարարելու առաջին օրը։ Այդ ցուցակներում մտցված են 100.000 մարդկանց անուններ։

Սպիտակ տեռորի ընդհանուր աճումը հաստատվում է հետեւյալ տվյալներով։ — 1928 թվին և 1929 թ. առաջին յերեք ամիսներին կապիտալի յերկրներում սպանվել են 229.274 հեղափոխականներ, վիրավորվել են 84.424 մարդ, մահվան պատիժ են ստացել 24.385 մ., ցման բանտարկության են դատապարտված 440 մ., 7.200 մարդել դատապարտված են բանտարկելության ու տաժանակիր աշխատանքի՝ ընդդամենը 15.908 տարով։ Իսկ յեթե այդ թվերը հա-

մեմատենք 1925 թ. հալածանքին վերաբերող թվերի հետ, կտեսնենք, վոր հեղափոխականների դեմ գործ դրվող հալածանքը աճել է 301 տոկոսով։ Տեսողը սաստկացել է վոչ միայն քանակով, այլև վորակով (սարսափելի ռեժիմ և այլն):

Բուրժուազիայի տեռորն առանձին կատաղությամբ զարկում է հեղափոխական զինվորներին և նավաստիւներին։ Ըստ Փրանսիական զինվորական մինիստրության պաշտոնական տվյալների, 1925 թ. Մարտիկոյի պատերազմի ժամանակ ուազմական դատարանները տաժանակիր աշխատանքների դատապարտեցին 1400 զինվորների և մատրոսների։ Կերպոյի տաժանակիր բանտում այժմ մոտ 900 զինվորական-պաշտոնյաներ են գտնվում, վորոնք մասնակցել են զորքում և նավատոմիղում յեղած ապստամբությանը, նաև 1927—1928 թ.թ. պահեստի զինվորների խլրտումներին։ Պահեստի զինվորների մեջ տեղի ունեցած անկարգությունների հետևանքով հրաման է տրված, ըստ վորի՝ պահեստի ամեն մի վաշտի համար նշանակվում է կադրի զորքերից կազմած հատուկ ջոկատ, վորի վրա դրվում են պոլիցեյական պարտականություններ։ 1926 թվին Ռումինիայում հետևակ գնդի զինվորները հրաժարվեցին Բեսարաբիայի գյուղացիների դեմ դուրս գալ և վագոնների պատուհաններից դուրս ձգեցին իրենց հրացանները։ Զինվորական բարձր իշխանության հրամանով այդ զինվորներից յուրաքանչյուր տասերորդը հրացանազարկ յեղակ, ընդամենը սպան-

վեցին 60 մարդ։ 1928 թ. հոկտեմբերին Լեհաստանում արյունաշաղաղ ընդհարումներ տեղի ունեցան նորակոչ զինվորների և պոլիցիայի միջև, պոլիցիան թրեր և ատրճանակներ գործադրեց։ Լիտվայում 1928 թ. մարտին 5-րդ գնդի 300 զինվոր ձերբակալվեցին։ Հունական բանտերում 1928 թ. փետրվարին գտնվում են 250 զինվորներ և 323 մատրոսներ, վորոնք զատապարտված են հեղափոխական գործնեյության համար։

Հրացանազարկ, տաժանակիր աշխատանք և բանտ, դաժան զիսցիալինա — ահա այն մեթոդները, վոր բուրժուազիան գործադրում են նրա համար, վորպեսզի զորքը իր ձեռքին իրեն հուշ-հպատակ զենք մնա։

Բուրժուազիան չի մոռացել պատերազմի այն տարիները, յերբ զորքերն ու մատրոսները բացարձակութեն համակրանք եյին արտահայտում ոռուսական հեղափոխությանը և հրաժարվում եյին կռվել ոռւս բանվորների և գյուղացիների գեմ։ Ահա թե ինչու բուրժուազիան ամեն միջոց գործ է դնում, վոր իր զորքը հեռու պահպի բոյլշեիկյան վարակից։ Բայց այդ չի ողնի, վորովհետև «բոյլշեիկյան բացիլը ընդունակ է նույնիսկ պատի միջով անցնելու»։

III. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐՄԻՐ ՖԲՌԱՑ

Նոր իմալերիալիստական պատերազմի պատրաստությանը և ԽՍՀՄ դեմ իմալերիալիստների նոր արտադրությանը և գյուղացիների միջազգային կարմիր ֆրոնտը ների և գյուղացիների միջազգային կարմիր ֆրոնտը Այդ շարժման վլուխ ե կանգնած կոմունիստական ինտերնացիոնալը:

Ամբողջ աշխարհում ներկայումս չկա վոչ մի յերկիր, նույնիսկ վոչ մի գաղութային ամենախուլ յերկիր, ուր լենինյան ուսմունքը կայուն, կոմունիստական գրուպպաների մեջ գոդված, հեղափոխական հետևողներ չունենար: Հենվելով մասսաների վրա, կոմումովի և հեղափոխական պրոֆմիությունների հետ ձեռք ձեռքի տված, կուսակցությունը ղեկավարում է պրոլետարիատի հակահարվածը լիտիացած բուրժուազիայի դեմ: Ժողովուրդների նոր սպանդանոց սարքելու իմալերիալիստների փորձին կոմինտերնը հակադրում է հեղափոխական ապստամբության, կապիտալիզմը տապալելու համար քաղաքացիական պատերազմի լողունը:

Պրոլետարական մասսաների խորքերից ծագեցին և ընդարձակ գործներություն են ցույց տալիս աշխա-

տավորների մասսայական կազմակերպությունները, վորոնք համակված են հետեւղական դասակարգային կովկի վոգով: — Յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալ, Պրոֆմիությունների կարմիր ինտերնացիոնալ, Գյուղինտերն, Մոլը, Միջազգային Բանկորական Ոգնություն, Սպորտինտերն, Հակամիմպերիալիստական Լիգա, ինվալիդների և պատերազմի նախկին մասնակիցների հեղափոխական միություն: Բուրժուազիայի ֆաշիստական միությունների դեմ մի շաբք յերկրներում ծագեցին բանվորական ինքնապաշտպանության հզոր միություններ: — Գերմանիայում՝ կարմիր ֆրոնտառվիկների Միություն, վոր 200.000 անդամ ունի, և դրան կից կարմիր ծովագնացների «Յերիտասարդության կարմիր ֆրոնտ» և «Կանանց և աղջիկների կարմիր միություն»: Ֆրանսիայում գոյություն ունի հակաֆաշիստական գվարդիա, Զեխուլովակայում, Ավստրիայում և Շվեյցարիայում վերջերս ստեղծվեցին նույն տեսակ կազմակերպություններ: Անգլիայում վերջերս հիմնված ե «Բանվորական Լեգիոն»: Այդ միությունների ծրագիրն ե՝ բանվորական դեմուստրացիաների և ժողովների պաշտպանություն ֆաշիստների հարձակումների դեմ, պայքար ֆաշիզմի դեմ, ձեռնարկություններում բուրժուազիայի և նրա ազենտների հայրենաւիրական և պացիֆիստական պրոպագանդի մերկացումն: Այդ միությունները հանդիսանում են վարպետ կարմիր պրոլետարական գվարդիա,

վոր հարկավոր բոպեյին պատրաստ ե հեղափոխության
տրամադրության տակ դնելու իրեն:

Ահա նրանց մարտական յերդումը:

«Երբեք չմոռանալ, վոր համաշխարհային իմպե-
րիալիզմը Խորհրդային Միության դեմ պատերազմ ե
պատրաստում, և վոր ամբողջ աշխարհի բանվոր դա-
սակարգի ճակատագիրը անխղելի կերպով կապված ե
Խորհրդային Միության հետ»:

Յերբեք չմոռանալ բանվոր դասակարգի տանջանք-
ները համաշխարհային պատերազմի ժամանակ և սոց-
դեմ. դավաճանությունը 1914 թ. ոգոստոսի 4-ին:

Միշտ կատարել բանվոր դասակարգի և սոցիալիզմի
վերաբերմամբ հեղափոխական պարտքը և մաս իբրև
հեղափոխության զինվոր:

Պրոլետարական բոլոր կազմակերպություններում
մաս իբրև դասակարգային պայքարի անհաշտ իրա-
գործիչ:

Իմպերիալիզմի ֆրոնտում և զորքում գործել մի-
միայն հեղափոխության ողտին:

Հեղափոխական պայքար մղել գերմանական բուր-
ժուազիայի դասակարգային գերիշտությունը տապա-
լելու համար:

Ամեն տեսակ միջոցներով պաշտպանել ոռուսական
և չինական հեղափոխությունը:

Միշտ և ամեն ժամանակ պայքարել Խորհրդային
Միության և համաշխարհային հաղթական հեղափո-
խության համար»:

Մարտական այս յերդումն ընդունված է գերմանա-
կան կարմիր ֆրոնտովիկների համար, բայց դա նույն-
պես պայքարի խոստում ե նաև մյուս յերկրների մնացյալ
միությունների համար: Իր շարքերում միավորելով
վոչ միայն կոմունիստներին, այլև տասնյակ հազա-
րավոր անկուսակցական և նույնիսկ սոցիալ-դեմո-
կրատ բանվորներին, նրանք ահարկու ուժ են ներ-
կայացնում, վորը վճռական ժամին ասելու յե իր
ազգու խոսքը: Գերմանական կառավարությունը այժմ
հրաման է արձակել կարմիր ֆրոնտովիկների միու-
թյունը արգելելու: Սակայն պրոլետարական դասա-
կարգային կազմակերպությունը խախտելու այդ փորձը
զայրույթի ահազին բռնկում առաջ բերեց ամբողջ
յերկրում: Կարմիր ֆրոնտը գոյություն ե ունենալու
չնայած այդ արգելքի:

ՄԱՅԻՍԻ 1-Ի ԴԱՍԵՐԸ

Այս տարի լրացավ 40 տարին այն որից, յերբ
առաջին անգամ տոնվեց մայիսի 1-ը:

Հետեւելով իր հեղափոխական դասակարգային կազ-
մակերպությունների կոչին, բոլոր յերկրների աշխա-
տավորներն այս տարի մայիսի 1-ին դուրս յեկան
այսպիսի լոգունգներով. — Դիմադրել պատերազմի
վտանգին, աշխատավարձի վրա կապիտալիստների
սկսած գրոհին, աշխատանքի պայմանները վատթարաց-
նելու նրանց փորձերին, ժողովների, միությունների,

մամուլի, գործադուլի ազատությունը խախտելու վորձերին, բողոքելով սաստկացող սպիտակ տեսողի դեմ, բանվորական շարժման հեղափոխական գործիչների դատական հալածանքների դեմ, պահանջելով քաղաքական բանտարկյալների ազատություն և ֆաշիստական ու «դեմոկրատական» կառավարությունների հալածանքներից փախած քաղաքական եմիգրանտներին ոթևանի իրավունք:

Մայիսի մեկը հրավարակական դեմոնստրացիաներով և միտինգներով նշանակալից անելու բանվորական մասսաների վորոշումը արգելվի հանդիպեց վոչ միայն կապիտալիստների կողմից, այլև մի շարք յերկրներում պետական պաշտոններ գրավող սոցիալ-դեմոկրատների կողմից։ Մայիսի մեկից դեռ շատ առաջ Լեհաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Բալկաններում և այլ տեղերում բազմաթիվ ձերբակալություններ կատարվեցին։ Միմիայն Պարիզում մոտ 3000 մարդ ձերբակալվեցին, իսկ Վարչավայում 1000-ից ավելի։ Մայիսի մեկին կապիտալիստական քաղաքների փողոցները իրենցից ներկայացնում եյին զինված բանակատեղիներ, ուր շրջում եյին գրահապատները պուլիմյոտներով, պոլիցեյական ջոկատներ և զինվորների շարքեր։ Յերթ կազմակերպելու վորձերին դիմավորեցին գնդակներով, սվիններով և ուետինե դագանակներով։

Բոլոր ժանդարմներից և պոլիցեյականներից ավելի աչքի ընկալ Բերլինի պոլիցեյապետ սոցիալ-դեմո-

կրատ Յերգիբեկ։ Յերեք որ շարունակ Բերլինում հրացանազարկ եյին անում և գանակոծում բանվորներին, վորոնք դիմագրություն եյին ցույց տալիս պոլիցեյականներին և արիաբար կովում եյին նրանց դեմ բարիկադների վրա՝ բանվորական արուարձաններում։ Պոլիցեյական տեսողը չեր ինայում նույնիսկ կանանց և յերեխաններին։ Տասնյակ սպանվածներ, հարյուրավոր վիրավորվածներ — ահա սոցիալ-ֆաշիստների մայիսմեկյան արյունաշաղախ ջարդի հետևանքը։ Վարշավայում և Լոձում բանվոր դեմոնստրանտներին գանակոծում եյին պոլիցեյականների հետ միասին նաև ԼՍԿ (լեհական սոցիալիստ. կուս.) մարտական դրուժինաները։

Այս տարիվա մայիսմեկյան դեպքերից պրոլետարիատը հիմնավոր դաս կստանա, — վոր ի դեմս սոցիալ-դեմոկրատների նա գործ ունի վոչ միայն կեղծավոր զավաճանների, վոչ միայն բուրժուազիայի իդեյական կողմանակցների, այլև նրա ակտիվ, ֆաշիստներին հավասար դաշնակիցների հետ։ Մայիսմեկյան ջարդը պարզ կերպով ապացուցեց ընկ. ։ Ստալինի, դեռևս 1924 թ., Փաշիզմի և սոցիալ-դեմոկրատիայի վերաբերյալ ասած խոսքերի ճշմարտությունը. —

«Ժաշիզմը բուրժուազիայի մարտական կազմակերպությունն է, վոր հենվում ե սոցիալ-դեմոկրատիայի ակտիվ աջակցության վրա...» Այդ կազմակերպությունները վոչ թե ժիտում, այլ լրացնում են իրար։ Դրանք վոչ թե անտիպոդներ են, այլ ջուխտակներ

Են: Ֆաշիզմը չձևակերպված քաղաքական բլոկ եւ, վոր ծագել ե իմպերիալիզմի յետպատերազմյան կրի- դիսի պարագաներում և նշանակված ե պրոլետարա- կան հեղափոխության դեմ պայքար մղելու համար։ (Ի. Ստալին. — Միջազգային դրության առթիվ: «Կոմ. Խնտերնացիոնալ», 1924 թ. № 7):

Իրենց լիդերների այդ դերը հաշվի կառնեն բան- վորական մասսաները և ամենից առաջ սոցիալ-դեմո- կրատ բանվորները։ Մայիսի 1-ի դասերը նրանց հա- մար զուր չեն անցնի։

ՄԻԶԱԳԳԱՑԻՆ ԿԱՐԱՐԻՐ ՈՐԸ

Ոգոստոսի 4-ին, իմպերիալիստական պատերազմի տարեդարձի որը, II Խնտերնացիոնալը նոր խեղկա- տակություն ե պատրաստում։ Սոցիալ-դեմոկրատիան չի կարող բոլորովին լոռությամբ անցնել համաշխար- հային տասնեճինդամյակը այն սպանդանոցի, վորի հա- մար նա պատասխանատու յե բանվոր դասակարգի առաջ։ Այդ որը սոցիալ-դեմոկրատական կուսակցու- թյունները ստորագրություններ են հավաքելու և դի- մելու յեն Ազգերի Լիգային և կառավարություններին՝ պատերազմներից հրաժարվելու և զինավորումները կըր- ճատելու համար, և կեղծավոր ճառեր են արտասանելու։

Սոցիալ-ֆաշիստների այդ դավաճան մանյովքին հակառակ, կոմունիստական Խորենացիոնալը, պրոֆ- միությունների կարմիր Խնտերնացիոնալը և ուրիշ

հեղափոխական կազմակերպություններ ոգոստոսի 1-ին կազմակերպում են միասնական պրոլետարական ֆրոն- տի մարտական որ — Միջազգային կարմիր Որ։

Միջազգային կարմիր Որի նպատակն ե — հիշեց- նել բուրժուազիային, վոր աշխատավոր մասսաները չեն մոռացել միլիոնավոր սպանված զոհերին և տան- ջանքների ու զրկանքների այն անհատակ ծովը՝ ուր նետված եր աշխատավոր մարդկությունը իմպերիա- լիստական սպանդանոցի չորս յերկար, արյունաշ- ղախ տարիների ընթացքում։

Վոչ թե բողոքներով, միջամտությամբ կամ բարե- խոսությամբ՝ իշխող գասակարգի առաջ, այլ մասսա- ների հեղափոխական հղոր դիմադրությամբ ե վոր խափանվելու յե իմպերիալիստների 1914 թվի ոգոս- տասի 4-ի չարագուշակ վոճրի կրկնության փորձը։

Միջազգային կարմիր Որը հայտարարվելու յե նոր պատերազմի հրկիչների դեմ պայքարի ուժեղացու- թյունները, միահամուռ ցանկություն՝ հանդես գա- լու ԽՍՀՄ պաշտպանության համար, ազգային և գա- ղութային կեղեքման դեմ պայքարելու համար, Փա- շիզմի, սպիտակ տեռորի, անգութ բանտային ուժիմի դեմ, պատերազմի հեղափոխական-հակառակորդների վերաբերմաբ զործադրվող հալածանքների դեմ յել- նելու համար։

Այդ որը, յերբ ԽՍՀՄ աշխատավորները՝ սահմանի վրայով կլսեն իրենց անդրսահմանյան յեղայրների մարտական պրոլետարական վողջույնը և ԽՍՀՄ — մի-

Չազգային պրոլետարիատի հայրենիքը — իմպերիալիստների նոր հարձակման փորձերից պաշտպանելու խոստումը, — մեր պատասխանը կլինի —

Բոլոր ուժերը նվիրել Հոկտեմբերի մեծ յերկրի ինքնապաշտպանությունն ու տնտեսական զորությունը ամրացնելու համար։ Աշխատել, աշխատել և աշխատել սոցիալիստական զորեղ շենքը կառուցելու համար՝ լենինյան կոմունիստական կուսակցության դեկավարությամբ, հաղթահարելով բոլոր դժվարությունները այն միենույն թափով և վոգևորությամբ, վորով 1917 թվի Հոկտեմբերի որերին մենք դնում ենք գրոհ տալու կապիտալիստական և կարգածատիրական Ռուսաստանի վրա։

Մեր զարգացման մեջ, մեր ամրացման մեջ են մեր անդրսահմանյան յեղբայրների մոտակա հաղթության գրավականը, ամբողջ աշխարհում սոցիալական հեղափոխության հաղթանակի գրավականը։

Այդ խորը գիտակցությամբ, վոր մեր աշխատանքը և մեր պայքարը կապված են ամբողջ աշխարհի կեղեք-վածների և Ակվածների պայքարի հետ, կապիտալի գերիների, կապիտալիստական տեսողի ու ըռնության գոհերի յեղբայրական համակրանքի հետ, — ԽՍՀՄ աշխատավորները Միջազգային Կարմիր Որին ավելի ևս լայն կպարզեն իրենց Հոկտեմբերյան հաղթական դրոշակները։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ ՅԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԸ

Խորհրդային Միության գեմ նյութվող պատերազմի անմիջական վտանգը Դաշնակցության համար բաց ե արել գործողությունների նոր ասպարեզ։ Դաշնակցության մարմիններն ու քաղաքական մամուլը հատկապես վերջին ամիսների ընթացքում բազմաթիվ անգամ քննության են յենթարկել Խորհ։ Հայաստանի գեմ պայքարելու գործնական հնարավորությունները Խորհրդային Հայաստանի Նկատմամբ Դաշնակցության ժամանակակից քաղաքականության այդ բոլոր վորոշումները կանխորոշում ու ամփոփում են քաղաքական պայքարի միջոցները, վորոնք թե միջազգային և թե «ազգային կյանքի» շրջանակում գործնական հողի վրա պիտի դնեն Խորհ։ Իշխանության տապալումն իմպերիալիստական պետությունների ինտերվենցիայի ճանապարհով։ Դաշնակցությունն այսոր կը կին անգամ, ինչպես իր պատմական վող անցյալում, ջատագովում ե ու հրահրում իմպերիալիստական պատերազմի ամեն մի ձեռնարկում։

Անհնար ե, ասում ե գաշնակցական մամուլը, տապալել Խորհ։ Հայաստանը, հաստատել հայկական նացիոնալիզմի գերիշխանությունն, առանց պրոլետական կարգերի լիակատար վոչնչացման։ Այդ իսկ

պատճառով բոյլշկիզմը տապալելու իմպերիալիստական զինակցության ծրագիրը, Անգլիայի ղեկավարությամբ յեվրոպական բալկանյան մի շարք պետությունների կոնվենցիաները, ֆրանս-լեհական ուսդմական գործողությունների բոլոր նախագծերն արժանացել են Դաշնակցության լիակատար հավանությանը:

«Վոչ միայն Անգլիայի, այլև ամբողջ Արևմտյան Յեվրոպայի համար ստիպողական անհրաժեշտություն ե դարձել այժմ միացյալ ճակատ կազմելու գործը բոյլշեկիզմի դեմ, մի անգամ ընդմիշտ վերջ տալու համար նրա քայլայիշ դավերին աշխարհի ամեն կողմէ Յեկ վորովհետեւ դառն փորձը ցույց ե տվել, վոր բացարձակապես անկարելի յեկ վերջ դնել բոյլշեկիզյան դավերին, համաձայնության դալով բոյլշեկիների հետ, հետեաբար դրամատիրական Յեվրոպային ուրիշ բան չի մնում անելու, բայց յեթե միացնել իր ուժերը, մահացու հարգած տալու համար Խորհրդային դավադիր իշխանության» — գրում ե «Հայրենիքը»: Պարզ ե. Դաշնակցության անցյալ և արդի քաղաքականության բնորոշ գիծը պատերազմի հեռանկարներն են՝ կապված «ազգային դատի լուծման» ծրագրի հետ: Դաշնակցության ուրիշ բան չի մնում անել, յեթե վոչ կառչել բացառապես քաղաքական մի հիմնակետի՝ հակախորհրդային պատերազմի հավանականությանը:

Նրանց վողջ մամուլը յելնելով այդ հիմնական կուրսից, ուշիւուշով քննության ե յենթարկում և փառաբանում գերմանացի զինվորական Հոֆմանի և Գինանաների ոլիգոպարիսիայի ներկայացուցիչներ Ռեվբերգի ու Ֆոն Կյուլմանի պատերազմական գործողությունների բոլոր նախագծերը: Շատ ժամանակ չի անցել նույնպես այն որից, յերբ դաշնակցական լիդերները կովկասյան եմիգրացիայի անունից իրենց ծառայությունն առաջարկեցին լորդ Բիրկենեղին, Զերչիլին և Զոնսոն Հիքմին, հակախորհրդային բլոկի այդ յերեք պարագլուխներին:

Դաշնակցությունը նույնիսկ իր վրդովմունքն ե հայտնում, վոր իմպերիալիստական պետությունները հակախորհրդային պատերազմի գործնական ծրագրին անմտորեն վարագուրում են Ազգերի Լիգայի և զինաթագման կոնֆերենցիայի դեկլարացիաներով: «Հայրենիքը» մի խմբագրականով ցինիկորեն հետևյալ կերպ ե արդարացնում համաշխարհային նոր ցնցումների իմպերիալիստական սպառազինումները:

«Յեկ րոպական պետությունները պատերազմի կպատրատութեն ինքնապաշտպանության սրբազնութիւն համար: Ֆաշիստ իտալիան պատերազմի կպատրաստվի, ապահովելու համար խաղաղ զարգացումն աշխատավոր ժողովրդին, վոր մտած ե ֆաշիստ ուժիմի ստեղծած հիմնարկության մեջ՝ սինգիկալիզմի և ընկերությանց միջո-

ցով։ Այս բոլոր արդար նպատակների համար կատարվող սպառագինումները պետք են վոր ծափահարվեն իբրև արդար դորձ»։ («Հայրենիք», 5148)։

Դաշնակցությունը մի կողմից արդարացնելով համաշխարհային կապիտալիզմի կազմակերպվող պատերազմի տեսնակին նախապատրաստությունը, մյուս կողմից մամուլի միջոցով իմպերիալիստական պատերազմի շարժառիթների հասարակական բացարությունը կամենում ե հիմնավորել «Խորհ. Միության կողմից իմպերիալիզմի վկին փաթաթվող պատերազմի ցանկությամբ»։ «Հայրենիքը» գրում ե. «Բոյլշեվիզմը ծնունդ առավ պատերազմի շնորհիվ և նա կարող է իր գոյությունն ապահովել միմիայն հարատև պատերազմական պայմաններում»։ Ղեկավարվելով քաղաքական այս մոտիվներով՝ Դաշնակցությունն «իբրև արդար գործ» ծափահարելով Խորհրդային Միության նկատմամբ իմպերիալիզմի ինտերվենցիայի քաղաքականությունը, իր հերթին իբրև այդ քաղաքականության գործոններից մեկը, կամենում ե գործնական հողի վրա դնել և արդարացնել այդ պրոցեսը։ Այդ նպատակով նա մի շարք պաշտոնական հողվածներով և ձեռնարկումներով առաջարկում ե ժամանակակիրապես հարթել կովկասյան քաղաքական եմիգրացիայի ներքին տարածայնությունները, վրապես համախորհրդային բլոկի աշխատանքներն ավելի արագ ընթացք ստանան։ Ներկայումս կերենսակու ղեկավարությամբ Դաշնակցությունը, վրա-

ցական մենշևիկներն ու մուսավաթը մի հարկի տակ եսերական «Դնի» թերթի հրապարակած հակախորհրդային բլոկի թեզիսներն են քննում։

Եեվ այսպես, Դաշնակցությունն իմպերիալիզմի կողմից առաջադրված «հայ ազգային դատի» լուծումը սերտորեն կապում ե իմպերիալիստական պատերազմի այն մոտակա հեռանկարների հետ, վոր ամբողջովին ուղղված ե Խորհ. Միության և կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի դեմ։

Մոտիկ անցյալից հայտնի յե, վոր կապիտալիզմի կողմից ծնունդ առած «հայկական հարցը» ամեն անգամ «իրական կշիռ ու արժեքը» և ստացել այն դեպքում, յերբ իմպերիալիզմի պատերազմական այս կամ այն ձեռնարկումների համար անհրաժեշտ է յեղել դա։ Հիշենք թեկուղ յեվրոպական դիպլոմատիայի կողմից «հայկական հարցի» քննության աշխատացումը թյուրքականյան, ուռա-թյուրքական և վերջապես 1914 թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ։

Այսոր ևս չի կարող չծափահարել և չմասնակցել իմպերիալիստական պատերազմի այն կուսակցությունը, վոր քառորդ դար շարունակ ապրել ե յեվրոպական թագավորների, գեներալների և մինիստրների կողմից «իրազործվող» «ավտոնոմ Հայաստանի» ավանդուրաներով։ Հրաժարվել պատերազմից՝ նշանակում ե հրաժարվել քաղաքական գոյության իրավունքից։

Ահա այն ձանապարհը, վորով պիտի գնա Դաշնակցությունը Խորհ. Միության դեմ պատրաստվող պա-

տերազմի մեջ, սակայն այս անդամ քաղաքանորեն կմախքացած և լայն հենարանից զուրկ։ Դաշնակցությունն այս անդամ ել արդարացնում ու հավերժացնում ե համաշխարհային այդ ջարդն ու ավերը, վոր կոչվում ե իմպերիալիստական պատերազմ։

Ներկայումս վորջ բանվոր դասակարգը, նրա հեղափոխական կազմակերպությունները պատրաստվում են ոգոստոսի մասսայական կամպանիային՝ պատերազմի վառնգի դեմ։ Կոմինտերնի դրոշակի տակ ծավալվող այդ համաշխարհային կամպանիան առաջադրում ե մեզ մասութիւն, մասսայական պրոպագանդի և ազիտացիայի միջոցով մասսաների առաջ պարզել և մերկացնել հայկական իրականության մեջ քառորդ դարից ավելի գործող բուրժուազիայի մարտական կուսակցության՝ Դաշնակցության պատմական կապն իմպերիալիզմի հետ, նրա ֆաշիստական եյությունը և հականեղափոխական լորձնեյությունը, Մուսսոլինիին և Պիլսուդսկուն դաշնակցած Դաշնակցության այսորվամանյովը։

Ոգոստոսի համաշխարհային հեղափոխական կամպանիան մեր լուրջ խորացրած իդեոլոգիական պայքարի կամպանիան ե ընդդեմ իմպերիալիստական բուրժուազիայի, ընդդեմ սոցիալ-ֆաշիզմի և ընդդեմ հայկական ֆաշիզմի։

(«Խորհրդային Հայաստան»
3 հուլիս, 1929 թ.)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
I. ՀԱՐՄԱՆԱՐԴԱՑԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԻԸ	3
Վառողի օտեմարանի վրա	7
Սպանությունը Սարայեվում	9
«Հայրենիքը վտանգի մեջ ե»	11
Սոցիալ-դեմոկրաների դավանանությունը	12
Բոլլեկիկ-լենինյանների ձայնը	15
Յեղբայրացում — բունիք — հեղափոխություններ	17
Արյան յեկ ավերումների հաշվը	23
«Դեմոկրատիայի» հաղթանակը	27
Սակայն այս գեռ բոլորը չե	31
II. ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻՐՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ	
Իմպերիալիստների ներհակություններ	37
Զինավորման տենդային լրցումն	43
Միասնական ֆրոնտ բնդդեմ ԽՍՀՄ	46
Բուրժուազիայի ավանդարդը	53
Թիկունիքի վերաբերյալ հոգսեր	58
III. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ	
Կարմիր Ֆրոնտ	68
Մայիսի 1-ի դասեւր	71
Միջազգային Կարմիր Ուր	74
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ ՅԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԻ	77

Գ.Ա.Հ.Ա.Ն.Զ.Ե.Ք
ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.
ԴԻՐԵԼ՝ Մոսկվա, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.

889

ՀՀ Ազգային գրադարան



NL0219637

40. 485

10 40т.



A. B.
ВОЙНА ВОЙНЕ

На армянском языке.

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10.